1883 ԵՐԵՄՏԱՄԵԱԿ 1912



№ 2 XXX ՓԵՏՐԻՃ XXX 1912

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զարլ Դիկկենս (Ծննդ. 100-ամ. տարեթով)	Պատկեր.
Առաք և ազգային հասկեր	Լևոն Մելիք-Ադամեան
Ածխավաճառը շուկայում	Պատկեր
Յիմար աղջիկը	Ժիրայր Յարադեան
Պետրոս Մեծը և Պետերբուրգի հիմնարկու թիւնը (Պուշկինից)	Յարութ. Թումանեան
Կամքի ոյժը՝ Զարլ Դիկկենս	Զարուհի
Մի դէպք Ռուբէնիս կհանքից	Տ. Մարիամ Զմշկեան
Փոքրիկ երաժշտուհի	Պատկեր.
Տեղագրական նամականի՝ Սիւնիքի գահ	Ն. վ. Տէր-Աւետիքեան
Աւարայր, Պատմ. պօեմ փոքրերի համար	Յ. Պետրոսեան
Տառախաղ	Մ. Հրշտպ. Քեշիշեանց
Կովկ. Հ. Բ. Ը. Որբան. ճաշարան	Պատկեր.

Մանկական Աշխարհ

Մեր յաղթանակը	Ամբիկ
Մանկութեան օրեր	Վարսիկ
Երկու բարեկամ	Յարութիւն Վերդեան
Սևերը Ովկիանոսում	Պատկեր.
Կենսագրական՝ Հայնէ (պատկերով) Հայնէից	Յ. Պետրոսեան

Մեր Թղթակիցները

Որբի խնդիրը	Աբրահամ Մոմճեանց

ՅԱՒԵԼՒԱԾ

Տօրի և Մալի, II գլուխ, Նաւի վրայ. Թարգմ. Դ. Բարխուդարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Յաւելուածները ստանում են Աղբիւր-Տարագ-Առողջապահ ժիւռնոյն հասցէով ստացող բաժանորդները և Աղբիւրին 2 ր. բաժանորդագրին վճարող պլրոցական աշակերտները։

Գեղափիճչիկ-Օրացոյց, 1912 թ. գինը 50 կ., պլրոցական աշակերտների համար 20 կ.։

Լոյս տեսան Առողջապահ եւ Տարազի փետրուարի №№-ը։

XXX ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ XXX

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեսուներորդ տարի 1912 № 2 Փետրուար

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

Չարլ Դիկկենս

ԱՏՈՒՔ ԵՒ ԱՋԱԶՈՒՆ ՀԱՍԿԵՐ

—

Էմիկը շատ հետաքրքիր տղայ էր։ Նա պատրաստվում էր դպրոց մտնելու։ Վաղ առաւօտից սկսած մինչև իրիկուն կամ հօրն էր դիմում, կամ մօրը և կամ սիրելի տատիկին, ու փէչները քաշքշելով հարցնում.

—Հայրիկ, այս ինչո՞ւ է այսպէս...

—Մայրիկ, այդ ի՞նչ ես տանում...

—Տատի-ջան, տա՛տի, սրա միջինն ի՞նչ է, ի՞նչ պէտք է տանենք...

Մի առաւօտ էլ տեսնելով որ հայրը պատրաստւում է գնալու, դիմեց նրան.

—Այդ ո՞ւր ես գնալու, հա՛յրիկ։

—Գնալու եմ մեր արտին ակը տամ։

—Հայրիկ-ջան, ինձ էլ տանե՛ս հետդ։

—Չա՛տ լաւ, սի՛րելիս, գնա՛նք։

Եւ հայր ու որդի գնացին իրանց արտին ակը տալու, այսինքն նայելու։

Նրանց գնալիք ճամբի երկու կողմից տարածուած էին գիւղի ոսկեզօծած—արդէն հնձելուն մօտեցած արտերը։

Թեթև քամուց հասկերն իրար քսուելով քաղցր սրսրուց էին արձակում և ծովի ալիքների նման այնպէս շարժվում, որ կարծես ամբողջ արտորայքը—ողջ դաշտը ոտն ելած առաջ էր վազում։

—Հայրիկ, հայրիկ, մի տես, մի տես. կարծես արտերը առաջ-կտրուկի են տալիս։

—Տեսնում եմ, սիրելիս, տեսնում. բայց գիտե՞ս ինչ են ասում արտերի այդպէս շարժուելուն։

—Ո՛չ, հայրիկ, չգիտեմ։

—Ասում են՝ արտերը հօրանց են գնում։

—Իրաւ, ասես-թէ մի տեղ են ուզում գնալ, հայրիկ, այնպէս են շտապում... Ա՛խ, ինչպէս լաւ է...

Արտերի այդ անչափ ուշագրաւ շարժումները և թէ այդ շարժումներից առաջացած ախորժելի ձայները էմիկի ուշքն ու միտքը յափշտակեցին, այնպէս որ մինչև իրանց արտին հասնելը մի բառ անգամ չկարողացաւ արտասանել, այնքան սաստիկ էր նրա հիացմունքը։

Երբ տեղ հասնելով կանգ առան, հայրը ասաց.

—Ահա մեր արտը։

Հօր ձայնից կարծես քնատեղից զարթեց է-

միկը, չուրջը նայեց, ուշի ուշով դիտեց արտն ու տխրութեամբ բացականչեց.

—Ափսո՜ս:

—Ի՞նչը, հոգիս, հետաքրքրուեց իմանալ հայրը:

—Այս տարի մեր արտը լաւ չի լինելու:

—Այդ ինչի՞ց իմացար, սիրելիս:

—Նրանից իմացայ, հայրիկ, որ հասկերի մեծ մասը կռացել—թեքուել են դէպի գետին և միայն քչերն են ուղիղ կանգնած:

—Եւ լաւ որ այդպէս է, մատաղ եմ:

—Ինչո՞ւ, հայրիկ:

—Որովհետև եթէ դրա հակառակը լինէին, ահա միայն այն-ժամանակ վատ կը լինէր մեզ համար, ինչպէս և ամեն արտ ունեցողի համար, այն-ինչ հիմա, փառք Աստուծոյ, այս տարի արտերն անչափ լաւ են:

—Լաւ են, ասում ե՞ս, զարմացած հարցրեց Էմիկը:

—Այո՛, հոգիս,—ասում է հայրը, բայց նկատելով որդու տարակուսութիւնը, վրայ է բերում:

—Դէ մէկ ձեռքդ մեկնիր և պոկիր դէպի գետին խոնարհած այդ ա տ ո ք և գլուխներից ցից—բարձր բռնած ա զ ա զ ո ւ ն հասկերից մի-մի կամ աւելի լաւ է երկու-երկու հատ ու բուիդ մէջ փըչրիր առանձին-առանձին, այն-ժամանակ ինքդ կը հասկանաս:

Էմիկն անմիջապէս պոկեց երկու ատոք և երկու էլ ազգուն հասկ, ուշադրութեամբ չօշափեց ու երբ ձեռքի ափում—բուի մէջ ջոկ-ջոկ հաղաղեց—տրորեց ու քաները, թեփը-մեփը փչելով հեռացրեց, իսկոյն գլխի ընկաւ—հասկացաւ բանի էութիւնը։

—Հա՜,—բացականչեց նա,—հասկացայ։

—Ի՞նչ հասկացար,—հարցրեց հայրը։

Այն՝ որ ատոք հասկերի մէջ տ ու ղ-տ ու ղ—լիքը-լիքը հատիկներ շատ կան, որոնց ծանրութիւնից չեն կարողանում գլուխնին բարձրացրած պահել, այլ թեքւում են դէպի գետին. մինչդեռ ազգուն հասկերը կամ բոլորովին դատարկ են և կամ շատ քիչ հատիկներ են պարունակում իրանց մէջ, այն էլ դ ժ ի մ-դ ժ ի մ—մանր-մանր, որոնցից մեծ մասն էլ փուճ են, ուստի-և թեթեւ, այդ պատճառով էլ կարողանում են գլուխնին բարձր պահել։

—Ապրի՜ս, աբևդ սիրեմ ես, ճիշտ այդպէս է. շատ լաւ իմացար ու լաւ էլ բացատրեցիր։ Դէ հիմա դու այն էլ իմացիր, որ մարդիկ ճիշտ այս հասկերի նման են։

—Ի՞նչ ես ասում, հայրիկ,—զարմացած հարցրեց Էմիկը.—այդ ինչպէս կարելի է։

—Ահա ասեմ թէ ինչպէս, սիրելիս. այն մարդը, որ ատոք հասկի հատիկների նման առողջ ուղեղի տէր է, այսինքն խելօք է, այդպէս մարդը

երբէք հպարտ չի լինում, երբէք չի պարծենում, այլ ճանաչելով իրա չափը, միշտ համեստ է պահում իրան, լաւ գիտենալով որ աշխարհիս երեսին շատ և շատ բաներ կան, որ ինքը չգիտէ, ուրեմն այդ բաների վերաբերմամբ ինքը մի տգէտ է. դեռ և նոր-նոր սկսաք է սովորի որ իմանայ, և հէնց դրա համար էլ ամենը ևս սիրում են համեստ մարդուն: Իսկ ով որ ազգուն հասկի հատիկների պէս հիւանդոտ ուղեղի տէր է, կարճ ասած՝ յիմար է, այդպիսին միշտ քթացից է լինում—զոռոզ, հպարտ, մեծամիտ, ա՛յնքան մեծամիտ որ շարունակ պարծենում է՝ թէ ինքը այս գիտէ, այն գիտէ, մինչդեռ իսկապէս գիտեցածը մէջը փուճ օխտը հատիկ է, այսինքն կարգին ու հաստատ մի բան չգիտէ: Ահա պատճառն այդ է որ անհամեստ մարդուն ոչ-ոք չի սիրում, այլ ամենքըն էլ ատում, արհամարհում ու տնազ են անում: Հիմա հասկացա՛ր, Էմիկս, թէ ինչո՞ւ են մարդիկ հասկերի նման:

—Այո՛, հայրիկ:

—Դէ հիմա գնանք տուն, սի՛րկիս:

Հօր ասածները Էմիկի վրայ խոր ազդեցութիւն արին: Վերադարձին նա շարունակ նրանց մասին էր մտածում, այնպէս որ ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս տուն հասան:

Էմիկը հէնց-որ մտաւ սենեակ, նրա փոքրիկ քոյրերը—մաքրասէր Մագթաղն ու խելօք Հու-

սիմը իսկոյն մօտ վազեցին ու սկսեցին հարց ու փորձ անել նրան, թէ ո՞ւր գնացին ինքն ու հայրիկը. ի՞նչ ու ի՞նչ արաւ, ի՞նչ բաներ տեսաւ, կամ նոր ի՞նչ իմացաւ:

Էմիկը չատ էր սիրում իրա քոյրերին. նա սիրով պատմեց նրանց այն ամենը, ինչ-որ հայրը ասել էր ատոք ու ազատուն հասկերի և խելօք ու մեծամիտ մարդկանց մասին:

Երբ Էմիկը վերջացրեց իրա պատմութիւնը, Մագթադն իսկոյն ասաց.

—Ես չեմ ուզում ազատուն հասկի պէս լինել, այլ ես ուզում եմ այնպէս լինեմ, որ ամենքն էլ ինձ սիրեն:

—Իսկ ես էլ միշտ կ'աշխատեմ, որ ատոք հասկին նմանուեմ և նրա պէս օգտակար, նրա նման համեստ լինեմ,—միւս կողմից վրայ բերաւ խելօք Հուսիմը:

Լեւոն Մելիք-Ադամեանց



Աժխասաձաոր չուկայում

(Կովկասեան տիպ)

ՅԻՄԱՐ ԱՂՋԻԿԸ

Մենք բնակւում էինք Քուի ափին։

Ամեն օր խեղճ կանայք էին գալիս, ջուր տաքացնում և շորեր լուանում։

Ամառն էր։ Մի օր մի խեղճ պառաւ եկաւ իրա աղջկայ հետ, կրակ արաւ ջուր տաքացրեց և սկսեց շորերը լուանալ։ Աղջիկը կըլինէր մօտ տաս-տասնումէկ տարեկան։ Մեր սենեակից նրանց տեսնում էինք։

Խեղճը երբ լուացած մեծ շորը տարաւ որ սառը ջրում ցայի, շատ կռանալուց աչքերը շաղուեցին, գլուխը պտուտ եկաւ ու ընկաւ ջուրը գլխի վրայ։

Մենք բոլորս դուրս թափուեցինք սենեակից և սկսեցինք օգնութիւն կանչել։ Դժբաղդ պառաւը մին ջրի տակն էր անում, մին բարձրանում ջրի երեսը, ու մէկ էլ տակն արաւ և էլ չերևաց։

Նրա աղջիկը լաց էր լինում ու ինչ որ բան ասում: Մենք մօտեցանք նրան որ մխիթարենք. իսկ նա լաց էր լինում և ասում.

—Վա՜յ, բանալինները գրպանումը մնացին... վա՜յ, բանալինները գրպանումը մնացին...

Ես բարկացայ նրա վրայ և ասացի.

—Յիմար աղջիկ, ուրեմն դու լաց ես լինում բանալինների համար և ոչ թէ մայրիկիդ համար: Ամօթ քեզ:

Ժիրայր Դաբաղեան

Պետրոս Մեծը եւ Պետերբուրգի հիմնարկութիւնը

(Պուշկինից)

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

(Մահւան 75-ամ. տարելիով)

Ցանգնած ամայի ալիքների քով
Նայում էր հեռուն նա լի վեհ մտքով.
Նրա առաջին գնում էր գետը լայն,
Գետում մակոյկ էր սանում միայն։

Ջրի ափերին տղմոտ, մամռապատ՝
Այստեղ ու այնտեղ չոփսօնի աղքատ
Արճիճներն էին հեռուից երևում.
Անտառն՝ անծանօթ մութ մառախուղում
Պահւած արևին, աղմուկ էր հանում,
Եւ նա խորհում էր Ջրի ափերին.
«Այստեղից պիտի շէնդացիներին
Սոսկացնենք խսպառ. կը հիմնենք քաղաք,
Յանդուգն ղրացու կամքին հակառակ.
Այստեղ է ահա այն վայրը բնաւոր,
Ուր դէպի Եւրոպ պիտի բանանք դուռ.
Եւ ծովի ափին հաստատուենք յաւէտ,
Նոր ալիքները կը ծփան վէտ-վէտ.
Կը բերեն մեզ հետ դրօշակներ օտար,
Եւ մեր խրախճանքից կը թնդայ աշխարհ»։
Անցաւ հարիւր ամ—և քաղաքը նոր՝
Հիւսիսի չքնաղ զարդը փառաւոր՝
Մութ անտառներից, ճահճային տղմից
Բարձրացաւ փարթամ ու շքեղալից։
Այնտեղ, ուր երբեմն խեղճ ձկնորսը ֆին՝
Բնութեան այդ խորթ որդին տխրագին՝
Ցածր ափերին միայնակ կանգնած,
Նետում էր ծովը ուռկանը մաշւած—
Այսօր աղմկող ափերին այնտեղ
Կանգնած են հսկայ, վիթխարի, շքեղ
Բազմաթիւ բուրգեր, մեծ աշտարակներ
Եւ ըսքանչելի, վեհ ապարանքներ.
Արար աշխարհի կողմերից բոլոր
Գալիս են այնտեղ նաւեր բիւրաւոր։
Գրանիտէ քարով զարդարւեց Նեւան
Հսկայ կամուրջներ ձգւեցին վերան.
Մոյգ, դալարագեղ ու ճոխ այգիներ
Ծածկեցին նորա բոլոր կղզիներ։
Եւ ծիրանակիր այրւի նըման
Աթոռին կրտսեր խոնարհւեց Մոսկւան։

Յարութիւն Թումանեան

ԿԱՄՔԻ ՈՅԺԸ

ՉԱՐԼ ԴԻԿԿԵՆՍ

(Ծննդեան 100-ամեակի առիթով)

Ծներ է սրանից ուղիղ հարիւր տարի առաջ, 1812 թ. փետրուարի 7-ին Անգլիայում.

Հայրը խրատ պարտքերի մէջ՝ նստել է բանտ, հետը տանելով իր ամբողջ ընտանիքն էլ։ Անգլիայում օրէնք կայ որ բանտարկուողի ընտանիքն էլ, եթէ ապրուստի միջոցներ չունի, նոյնպէս բանտարկուում է, պահպանուում, կեբակրուում բանտում մինչև իսկական բանտարկեալի ժամանակամիջոցի լրանալը։ Չարլ Դիկկենսը այս բանտում դիտում է իր շուրջը և նրա մանկական ուղեղում դրոշմուում են կսկիծները, տառապանքը։ Կարեկցութիւն դէպի թշուառը, սէր դէպի ճնշուածը—ահա թէ ինչ է արտայայտուում Դիկկենսը իր անհամար գրուածքների մէջ։ Արտասուքի մէջ դուք ծիծաղից թուլանում էք կարդալով Դիկկենսի վէպերը, պատմուածքները, որոնց մէջ դուք կը գտնէք իրան, Դիկկենսի իսկական կենսագրութիւնը, չարքաշ կեանքը և այն պայքարը, որ նա մղել է իր ճակատագրի հետ ու փայլուն յաղթանակով ոտնակոխ անելով թշուառութիւնը, բարձրացել է մինչև պայծառ աստղերը։

Աղբիւրի հետևեալ համարից կըսկսէք կարդալ Դիկկենսին, որպէսզի համոզուէք, թէ երեկւայ մանուկը, որին իր հարուստ աղգականներից մէկը խղճալով իր վակսի գործարանում շաբաթը 6 շիլինգով (օրական երկու աբասով) աշխատեցնում էր՝ վակսի սափորիկներին իր ֆիրմայի դրօշմը կպցնել տալով, ինչպէս է կիսաքաղց, կիսամերկ անյուսահատ աշխատում։ Ապա հաղիւ տասներկու տարեկան, վակսի գործարանից ընկնում մի երկու տարի ուսումնարան և 14 տարեկան հասակից արդէն նետուում կեանքի մէջ։

Զարուհի

ՄԻ ԴԷՊՔ ՌՈՒԲԷՆԻՍ ԿԵԱՆՔԻՑ

Ռուբէնը մի փոքրիկ, գընդլիկ երեխայ էր, խարտեաշ գանգուր մազերով, սևորակ սիրուն աչքերով ու լոյսի նման ճերմակ դէմքով, սակայն շարժուձևերը չափազանց դանդաղ։ Առաւօտները Ռուբէնի եղբայրները միշտ թէյը խմած-վերջացրած էին լինում, իսկ նա դեռ մի կօշիկը հագիւ էր լինում հագած։

Որքան էլ աշխատում էի, որ Ռուբէնի շորերը նրա անկողնի մօտ լինին, որպէսզի առաւօտները իզուր ժամանակ չկորցնի փնտրելով, չէր լինում, չընայելով որ դրա համար յաճախ էր պատժւում։

Պատժւելուց յետոյ միայն մի անգամ էր ուշադիր լինում, իսկ միւս օրը դարձեալ միևնոյնը—գուլբի մէկը սեղանի տակ, միւսը մօր սենեակում, երրորդը սեղանատան օթոցի վրայ, ու այդպէս ամեն Աստծու օր։

Ռուբէնին մեծ դժւարութեամբ պատրաստեցինք գրել-կարդալ սովորեցնելու և երբ դարձաւ 8 տարեկան, նրան ուղինք ըէալական դպրոց։

Սակայն դպրոց տալուց յետոյ գործը աւելի վատացաւ. չընայելով որ շատ անգամ նոյնիսկ առանց թէյ խը-

մելու էր գնում դպրոց, բայց դարձեալ ուշանում էր դասերին։ Այդ ուշացումները այնքան յաճախ էին կրկնւել որ դպրոցի վարչութեան ուշադրութիւնը հրաւիրեցին նրա վրայ, և վարչութիւնը համոզւեց, որ բացի նրանից որ ուշ է գալիս դպրոց, այլև լաւ չի սովորում, սաստիկ ծոյլ է և իր դասընկերներից ամենից թոյլն է։

Ի՞նչ անէի. շատ էի աշխատում, որ այդ ամենի առաջն առնեմ, նոյնիսկ սկսեցի ամեն առաւօտ ինքս հագցնել Ռուբէնի շորերը, որ դասերին հասնի. սակայն իմ բոլոր աշխատանքը դուրս էր անցնում, ոչինչ չէր օգնում։

Ռուբէնի մեծ եղբայր Լեոնը, որ արդէն գիմնազիայի 2-րդ դասարանի աշակերտ էր, իսկ փոքր եղբայր Նիկոդայոսն էլ պատրաստւում էր քննութիւն տալ՝ գիմնազիա մտնելու, յաճախ տնազ էին անում Ռուբէնի դանդաղկոտութեան, նրա անչափ ծուլութեան համար և միշտ ծիծաղում վրան, բայց այդ ևս չօգնեց Ռուբէնին ուղղւելու, կարծես նրան չէին տնազ անում, նրան չէին ծաղրում։

Սակայն հայրը ուրիշ կերպ էր նայում խնդրի վրայ. նա նոյնիսկ արգարացնում էր Ռուբէնին, ասելով՝—

—Երևի երեխան ուսման սէր և ընդունակութիւն չունի, ուրեմն աւելի լաւ է որ դպրոցից դուրս բերենք և տանք մի որևէ արհեստի։

Մինչ այդ հետևեալ դէպքը տեղի ունեցաւ։

Մեր կացած տան ներքին յարկում նպարավաճառի խանութ կար, ուր ծառայում էր հազիւ 7—8 տարին լրացած մի փոքրիկ տղայ, որի գլխաւոր գործն այն էր, որ խանութում առևտուր անողների գնածները՝ կաղամբը, սոխը, գետնախնձորը և այլն հետները տանում էր նրանց տուն։

Մի օր այդ խեղճ երեխան շատ գնալ-գալուց սաստիկ քրտնում է, սառը ջուր խմում ու հիւանդանում։

Ես անտեղեակ էի այդ բանից, երբ գնացի խանութ և մի քանի բան առնելով խնդրեցի խանութպանին որ աշկերտի ձեռքով վերև ուղարկի, բայց իմանալով որ երեխան հիւանդ է.

—Լաւ, ասացի, ոչինչ, ես մեր ծառային կուղարկեմ։

Ապա երբ բարձրացայ վերև, տեսայ որ Ռուբէնը արդէն տանն է. գոյնը թռած, շատ արտասւելուց աչքերն ուռած ու կարմրած։ Եւ երբ հարցրի ու իմացայ որ Ռուբէնին դպրոցից արձակել են ծուլութեան համար, ոչ մի խօսք չասացի, ոչ մի յանդիմանութիւն չարի, այլ իսկոյն կանչեցի փոքրիկ ծառային, դռնապը քանդել տւի, Ռուբէնին կապեցի, ծառայի թասակը Ռուբէնի գլխին դրի, իսկ նրանը ծառային տալով, Ռուբէնի թևից բռնեցի և հետս տարայ խանութ։

—Ահա,—ասացի խանութպանին—ահա ձեզ համար մի նոր աշակերտ եմ բերել։

Այդ լսելուն պէս Ռուբէնս սկսեց լայ լինել, չոքեց, փարւեց ծնկներովս, սկսեց համբուրել, խնդրել, աղաչել։

—Ո՛չ, ոչ... մայրիկ ջան... ինձ աշակերտ... մի, մի... մի տալ... խոստան...ում եմ... այսուհետև լաւ սովորել...

Սակայն ես ուշադրութիւն չը դարձրի ոչ նրա լաց ու կոծին, ոչ էլ նրա աղաչանք-պաղատանքին, այլ նրան թողի նպարավաճառի խանութում ու ինքս դուրս եկայ։

Ահա այդ միջոցին խանութ մտաւ մի պարոն և զանազան նպարեղէն առնելով՝ դիմեց Ռուբէնին, որ հետը տանի տուն։

Այդ առաջարկութիւնը շատ վատ ազդեց Ռուբէնի վրայ. նա սկսեց նորից այնպէս աղիողորմ լալ ու հեկեկալ, որ պարոնը, որ մի ինտելիգենտ անձն էր, անչափ զարմացաւ։

—Իմ այս անմեղ առաջարկութիւնն ինչո՞ւ այսպէս վիրաւորեց աշակերտիդ, դիմեց նա խանութպանին։

—Որովհետև նա իմ աշակերտս չէ, պարոն, ասում է խանութպանը և պարոնին պատմում բանի էութիւնը։

Ռուբէնը շարունակում էր դառնապէս լալ։

Իսկ ես որ պատշգամբից դիտում էի խանութում տեղի ունեցող անցուդարձը, այլևս չըկարողացայ համբերել,

սիրտս ճմլեց. շտապ-շտապ լիշայ սանդուխքներից ու գընացի խանութ դժբաղդ ձագուկիս մօտ։

Ռուբէնը՝ ինձ տեսնելուն պէս վազեց ընկաւ դիրկս և լալով սկսեց աղաչել.

—Ա՜, մայրիկ ջան... տար... տար ինձ մեր տուն... խոստանում եմ այլևս դասերին չուշանալ... խօսք եմ տալիս այսուհետև աշխատասէր լինել... էլ երբէք, երբէք չեմ ծուլանալ...

Իսկոյն տարայ տուն, գոգնոցը քանդեցի, գլխից ծառայի թասակը վերցրի, գիմնազիական գլխարկը նորից ծածկել տւի ու հետս առայ—գնացի դպրոց։

—Պ. Տեսուչ,—դիմեցի վերատեսչին,—խնդրում եմ այս անգամ ներողամիտ լինիք և մի-երկու ամիս ժամանակ տաք ուղղելու։ Եւ թէ չուղղւի, դարձեալ ծուլութիւն անէ ու լաւ չըսովորի, ես ինքս չեմ ուղարկիլ դպրոց։

Վերատեսուչը, որ մի բարի ուսուցիչ և լաւ դաստիարակ էր, ուրախութեամբ համաձայնեց։

Ահա այդ օրւանից սկսած Ռուբէնը սկսեց այնպէս ուշադրութեամբ լսել դասերը և եռանդով աշխատել, որ կարճ միջոցում ոչ-միայն դպրոցի ամենալաւ աշակերտներից մինը դարձաւ, այլև ուշադիր կերպով այնքան օժանդակ գրքեր կարդաց որ իրա դասարանի ամենազարդացած պատանին էր համարւում։ Նա մեծ յաջողութեամբ անցաւ 6-րդ դասատան դասընթացը և սկսեց պատրաստւել դըպրոցի վերջին—7-րդ դասարանի աւարտական քննութիւնն այնպէս տալ՝ որ արժանանայ ոսկէ շքանշանի։

Բայց դրա հետ միաժամանակ ոչ միայն տանը օգնում էր ինձ ինչպէս մի անարար լաւ աղջիկ, այլև պարապում էր փոքրիկ եղբօր ու քրոջ հետ այնպէս յաջող, որ 9 տարեկան Աննան մտաւ գիմնազիայի առաջին դասատուն։

Եւ չընայելով այդ ամենին, Ռուբէնը ժամանակ էր գտնում նաև ուրիշ աշակերտների հետ ևս պարապել վարձով և իր ստացած այդ անդրանիկ աշխատանքը ամբողջովին բերում յանձնում էր ինձ։

Տ. Մարիամ Ջմշկեան

Փոքրիկ երաժշտուհի

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՍԻՆԻՔԻ ԳԱՀ

Այ իշխանական տիրապետողի ժամանակի ընթացքում տապալուած մի յուշարձանն եմ սկսում նկարագրել, որ անցաւոր է, այսօր կայ, վաղը չը կայ, այլ յաւերժական և մշտնջենական ընութեան մի չքնաղ տեսարան, որ երկրագնդի վրայ իր նման հազարաւորների մէջ պարծանքով կարող է յիշուիլ և իր եղակի, բարձրադիրը, յարմարագունեղ, տիրապետող, վեհապանծ դիրքով Սիւնիքի ամբողջ լեռնաստան, փառահեղ նահանգում, ամենայն իրաւամբ կարող է նրա՝ Սիւնիքի՝ գահը կոչուիլ։

Հայրենի երկրի այդ գեղեցկագոյն ակը մի նկարչական, սքանչելի, փոքրիկ, տափարակ վայր է. մի կէտ, թառած մի կոխոտ, բարձր, ահռելի քարափի վրայ, կախած դէպի անհուն, անդնդախոր Որոտնայ ձորը, ամեն կողմից շրջապատուած զուտ կաղնի, հրաշալի, բուրաւի անտառներով, տեղը կոչուում է Երիցաթումբ, համանուն փոքրիկ գիւղով, 50 տուն. փոքրիկ եկեղեցին հնադարեան, հասարակ ամուր շէնք է։ Նախնի դարերից կան մնացած նշանաւոր թաղակապ, պինդ կամարներ, որոնց վրայ բնակութիւն են հաստատել մօտակայ Շնհէր և Հալիձոր գիւղերից մի քանի տներ, վերածնելով հին գիւղը 1866 թուին։

Երիցաթումբը գտնւում է Սիւնիքի բուն կենդրոնում և լայնարձակ, լեռնոտ նահանգի անթիւ սարերի մէջ մի այնպիսի դիրք է բռնել, որ շրջակայ լեռների յարմարաւոր դասաւորութեամբ, այստեղից ամբողջ Սիւնիքը իր չորս գաւառներով երևում է ինչպէս ափսէի մէջ կարգած. ահա Սիսիանը, Ղափանը, Զանգեզորը, Բերքուշատը, բոլոր ծործորները, գետերը, ջրվէժները, շատ գիւղեր, հեռուն՝ հսկայ լեռների գրկում Տաթևի գմբէթաւոր մայրավանքը մի քարաժայռի վրայ, և այլն և այլն, ամբողջ աշխարհը երևում է այստեղից. ՏԷր իմ, ինչ անծայրածիր, հիանալի հորիզոններ։ Յիրաւի Սիւնիքի գահ։

Երիցաթումբի լեռնային փոքրիկ դաշտավայրը եղերած է դարձեալ բարձրաբերձ նախ անտառոտ, ապա արօտաւոր լեռնակոյտերով. մերձակայ այդ թիկնոց սարերի մէկի ստորոտի ժայռի բացւածքից ժայթքում է մի ակունագետ, առնորակ, մեծ աղբիւր մի ջրաղացի ջրով, որի կէսը թաղ տւած առուով բերել են գիւղի մէջ տեղը խմելու համար. դրա առաջ դրւած են չորս անագին քարեայ նաւեր անասունների ջուր խմելու համար. ջրի միւս մասը բաց առուով գալով աղբիւրի հետ բանեցնում է մի ջրաղաց և ջրում է բանջարանոցները։

Երիցաթումբի մի շարք տները ուղղակի շինւած են գիւղի արևելահիւսիսային ըմբոստ բարձր քարափի ծայրին կախւած դէպի ահաւոր Որոտնայ ձորը. դրանցից մինը պատկանում է գիւղը վերանորոգող նահապետին։ Այդ տունը շինւած է հնադարեան կամարաւոր շէնքերի վրայ, որոնք շատ յարմարաւոր թագստի և պահեստի տեղեր են. այս տան ընդարձակ, երկար պատշգամբը կախւած է ժայռից դէպի հինգ հազար ոտնաչափ խորութեան Որոտնայ ձորը. այն զմայլելի տեսարանը, որ բացւում է այս պատշգամբից, իրաւունք է տալիս մեզ անւանելու սրան արքայական պատշգամբ, վասնզի թագաւորներն իսկ կը փափագէին այսպիսի մի դաստակերտում գոնէ մի ժամանց ունենալ։ Արքայական պատշգամբից ներքև ափուող և վի-

շապի պէս գալարուող, խոր-խոր, լայնարձակ ձորը, լի պատմական յիշատակարաններով, գիւղերով, անտառներով, այգեստաններով՝ կատարեալ մի երազի և անուրջքի տպաւորութիւն է անում, որոնց վրայ մի պարզ, թեթև գաղափար կարող է տալ միայն տաղանդաւոր նկարչի վրձինը։

Երիցաթումբի գիւղացիները ամենայն առատութեամբ վառում են կաղնի չոր փայտ, որովհետև ճոխ անտառները գիւղից միայն մի քանի քայլի վրայ են. նրանք պետական են և պահպանւում են բաւական խստութեամբ և խնամքով. աշնան երեք ամսին Արցախի կողմերից խոզի երամակներ են բերում թափւած կաղինը կերցնելու, որից նրանք շատ դերանալով ուղարկւում են Բագու ծախ. իրենք տեղացիները պայմանաւորւած են իրենց մէջ խոզ չը պահել՝ արտերը չը փչասելու համար։ Գիւղի հանդի արտերը կարտւած անտառների տեղերից են դոյացել և բերք չեն տալ, եթէ լաւ չաղբւին. դրա համար գիւղը բաւական մաքուր է երևում, որովհետև աղբերը անընդհատ տանում են դուրս, թափում արտերում։ Գիւղատնտեսութեան ոչ մի ճիւղը առանձնապէս առաջ գնացած չէ, ժողովրդի թանձր խաւար տգիտութեան պատճառով. ամեն բանով էլ պարապում են շատ քիչ, կարծես նմուշի համար. կան բարեյաջող պայմաններ մեղւաբուծութեան, բանջարեղէն վարելու և ձորերում այգեպանութեամբ և շերամապահութեամբ պարապելու։ Որոտնայ գետի ափերում եղած այգիներից արտադրում են թթի, կեռասի օղիներ և գինի, միայն աւելի քմում են, քան թէ ծախում։ Մի խօսքով այս հարուստ բնութեան մէջ գիւղացիները հազիւ մի կերպ գլուխ են պահում, ինչպէս ասում են՝ ծայրը ծայրին հասցնում. մի շրջիկ ուսեալ գիւղատնտես շատ մեծ օգուտ կարող էր տալ սրանց, այս թմրած, խիստ յետամնաց ժողովրդին. դրա համար էլ այս գիւղից Բագու աշխատանքի գնացող շատ կայ։

Գիւղերի միակ փրկութիւնը ուսեալ քահանաներից և

ուսուցիչներից է, որոնք դեռ մեծ դիւղերում չը կան, ուր միայ թէ այսպիսի պատիկ գիւղերում։

Երիցաթումբը գիւղում արքայական պատշգամբից միայն մի ընդհանուր հայեացք ձգելով նրանից ներքև տարածուղ նշանաւոր և հռչակաւոր Որոնայ ձորի վրայ, ներկայ երկտողս վակելով, հրաւիրում և յորդորում եմ նորաբողբոջ գրողներին և նկարիչներին, առաթուր հարկանելով ամեն խոչընդոտները, ինչպէս են հեռաւորութիւնը և ճանապարհների դաժանութիւնը, այցելել բնութեան հրաշալի և հազւագիւտ տեսարաններով լի այս երկիրը, որ իր մէջ եղած բնակչութեան հետ դեռ նիրհում է կուսական, նահապետական դրութեան մէջ, ուստի և կան անբաւ ուսումնասիրութեան նիւթերի հոծութիւն։ Սարահարթերով և երկնայանկէտ լեռնագագաթներով փարթամ Սիսական աշխարհում Երիցաթումբն ունենալով մի տիրապետող դիրք, երբ ինքն իր ականալիքը դարձրած բարձրից դիտում է ամենքին և ամենքն էլ իրեն, դրա համար այդ արձակ դիրքը վայելելով, նա ազատ չէ բնականաբար ձմեռը այս երկիրը փոթորկող մրրիկներից, երբ օրերով ճանապարհները փակւում են և նոյն իսկ գիւղի գոմերի տաւարը անկարող է լինում դուրս գալ գնալ գիւղի միջի աղբիւրից ջուր խմելու։ Հարկ կայ արդեօք յիշել, որ ամառը այստեղ զմայլելի է և կենսապարար՝ բառիս բուն և կատարեալ նշանակութեամբ. քաղաքներում ապրածի պղտորւած արիւնը մի երկու ամսւում խապար կը բիւրեղանայ այստեղ։ Իսկ վերոյիշեալ արքայական պատշգամբում, ուր հնչում է զեփիւռի և մշտական լեռնային ծաղկաբոյր հովուասուններին համերգը, վայելած մի ժամանցը անջնջելի քաղցր տպաւորութիւն և յիշողութիւն է թողնում այցելի սրտի և հոգու վրայ։

Նիկ. վ. Ծէր-Աւետիքեան։

ԱԽԱՐԱՅՐ

(Պատմական պօեմ փոքրերի համար)

I

Կանաչազեղ լերանց լանջով պարզ գետակն է ցած թափւում,
Եւ քաղցրաձայն իր կարկաչով Ժմրած հովերն սթափւում.
Բերում է նա գով կոհակներ՝ նարգիս շուշան ցօղելու,
Եւ սառնորակ իր ալիքներ՝ հովիտ, արօտ ողղելու.
Մշտադալար հովտի միջին ծաղկանց հոյլեր բազմերանգ,
Ջինջ եթերքին բոյր են շնչում, փայլ են տալիս երփներանգ։

II

Ի՛նչ սիրուն էք, Հայոց լեռներ, ափսոս մնացիք անտէրունչ,
Մեր նախնիքը անձնանուէր ձեր մէջ առան մահուան շունչ.
Եւ վաղ՝ ինչպէս երջանկութիւն, այս աշխարհից հեռացան,
Դեռ չտեսած ազատութիւն՝ իրենց իղձը սրբազան։
Բայց մնում են, Հայոց լեռներ, մեր սէգ նախնեաց քաջ որդիք,
Դուք չէք թողնի միշտ օտարներ պղծեն մեր սուրբ հայրենիք...
Ի՛նչ հանդէս է ձեր ձորերում, ազատաժոռ գետափում,
Հայ իշխաններ մէկտեղ խմբուած՝ ճար են այդպէս շոտափում։

III

Ո՛չ. հանդէս չէ ուրախութեան. նրանք տխուր են, գլխիկոր,
Կրկին նոցա հարւածել է չար թշնամին կամակոր.
Բաժանւելով հայրենիքից՝ հեռու աշխարհ պիտ գնան,

Մեծ արքային տան շուտափոյթ իր պալատում պատասխան։
Եւ ոմն գիտէ, էլ կազատւէն բռնակալի կապանքից.
Գուցէ զրկէ ժանտ թշնամին և՛ սիրելուց և՛ կեանքից։
Ահա տալով վերջին բարև Հայաստանի լեռներին,
Բաժանւում են հայրենիքից՝ աչերն ուղղած դէպ երկին։

IV

Օ՜հ, այդ կարօտն եթէ կրկին յագեցնել վիճակւէր,
Անգութ պարսկի ճնշող լծից հայրենիքը թէ փրկւէր...
Բայց ունայն են անուրջները, չունին ոչինչ իրական.
Երազողի սուր թևերը արթնութեան մէջ էլ չկան...
Մնաք բարով, Հայոց լեռներ, կարկաչասահ գետակներ,
Մնաք բարով հովիտ, արօտ, անուշաբոյր ծաղիկներ.
Ուր որ լինին, ձեր փայփայանք նոցա սրտում պիտ ճան,
Թէ սև բանտում, թէ աքսորում. ճնաք բարով յաւիտեան...

V

Ո՛ւր ճնացին Հայաստանի քաղաքները բազմամարդ,
Հսկայ լեռներ, խոր-խոր ձորեր և դաշտերը ծաղկազարդ.
Աւեղ, կորան. և նոցա տեղ սև գիշերւայ խաւարում,
Պարսկաստանի բարձրագագաթ սեգ սարերն են բարձրանում։
Եւ մթութեան հաստ քօղի տակ՝ հեռաստանում, ձորի մէջ,
Նշմարւում են սիւնանման կարմիր շերտեր՝ միշտ անշէջ.
Կրակատան բոցերն են այդ, որ ելնում են դէպ երկին.
Տիսբոնն է դա, ուր նստում է նոցա ահեղ թշնամին։

VI

Ինչպէս անգուսպ գոռ փոթորկից մրրկւում է ծովն յանկարծ,
Այնպէս յուզւեց այդ պատկերից նոցա սիրտը պապակւած.
Ատրուշանի կրակն ու բոց տխուր մտքեր ծնեցին,
Մութ՝ քան գիշեր, քան սև ծուխը, որ թռչում էր դէպ երկին։
Անգութ մահուան տագնապները նոցա մտքից չքացան,
Եւ վերահաս փորձանքների պատկերները բացւեցան.
Ի՜նչ. միթէ հայն ուրանալով իր նախնիքի հաւատը,
Ատրուշանի սև ծխի մէջ պիտ մրոտէ ճակատը։

VII

Մինչ արևի վառ շողքերը ողջ աշխարհն են զարդարում,
Նոքա արդէն մեծ Տիսբոնի փողոցներով են գնում։
Դիւադադար պարսիկները քունն աչքերում, գլխիկոր
Դուրս են վազում դարպասներից և շտապում դէպի ձոր։
Ե՛ւ վազում են ընչասպառ, և՛ կանգ առնում դադարած,
Կրկին վազում, լայն բերանը հևհևալով բացարած.
Շտապում են, շուտ տեղ հասնեն՝ արևի դէմ չդիմելու,
Զոյգ ձեռքերով գլխին տալու և մազերը փետելու...։

VIII

Իսկ իշխաններն այդ միջոցին աչերն ուղղած միշտ առաջ,
Սպասում են, թէ մեծ արքան ռւմ կուղարկի ընդառաջ.
Բայց այս անգամ ոչոք չեկաւ. իսկ պալատն էլ հեռու չէր,
Եւ քիչ յետոյ այնտեղ հասան մեր դադարած հայ քաջեր։
Կարծես նոքա սատանայի որջի առաջ կանգ առան,
Այո, այնտեղ դև է ապրում, կամ վայրենի մի գազան.
Այնտեղից են սկիզբն առնում փոթորիկները ահռելի,
Եւ այնտեղ են ապրում, սնւում օձ ու ճիւաղ զարշելի։

IX

Այդ միջոցին պարսից արքան սենեակի մէջ, գլխիկոր
Պատրաստւում էր սպառնալու իշխաններին կամակոր.
Վշտի, թախծի դառն յուզմունքից այլայլել էր երեսը,
Եւ զայրոյթի վառ բոցերով հրդեհել էր իր ներսը.
Թոյն էր կիտել լեզւի վրայ՝ հայ քաջերին խայթելու,
Պատրաստւել էր, ինչպէս որոտ նոցա գլխին պայթելու։
Երբ ծառայից նա իմացաւ, որ իշխաններն եկել են,
Հրամայեց նոցա ասել, որ դահլիճը ներս մտնեն։

X

Նա ներս մտաւ իր դահլիճը, գահի վրայ բազմեցաւ.
Ինչպէս արդեօք պիտ ընդունէ, յանկարծ մտքով անցկացաւ.
Բայց նա հարցը դեռ չէր վճռել, երբ քաջերը ներս մտան,
Եւ արքային գլուխ տալով՝ ոտքի վրայ կանգ առան։

«Դուք, ըմբոստներ, յանդգնեցիք իմ պատուերը չը լսել»,
Գոռաց արքան նոցա վրայ և սուսկացաւ շնչարգել։
Նրա ձայնից իր պալատի սենեակները թնդացին
Եւ նոցանում մնացող դևերն ուրախացան, խնդացին...

XI

«Ապերախտներ», ասաց արքան ուշքի գալով, ցածրաձայն,
«Ինչո՞ւ թողած այն բարիքը, որ տալիս է մեծ արքան,
«Անմտաբար ենթարկում էք դուք ձեր կեանքը վտանգի,
«Եւ ձեր որդոց, թշուառ կանանց անտանելի տանջանքի։
Նրա ձայնը երերուում էր լուռ և անձայն սենեակում,
Ինչպէս քնարի թուլացած լարը, որ դողում է և յանգում։
«Բայց ինչպէս դուք յանդգնեցիք», շարունակեց մեծ արքան.
«Դուք չէք տեսել իմ զայրոյթը. շո՛ւտ, ասէք ինձ պատասխան։

XII

Իշխանների շարքի միջից Քաջ Վարդանը դուրս գալով
Թագաւորին գլուխ տւեց և խօսեցաւ անվրդով.
—Այո՛, ինչ որ մենք այժ ունէինք կատարելու քեզ համար,
Մինչև այսօր չենք խնայել, աշխատելով անդադար.
Կրկնապատիկ հարկ ուզեցիր. այդ էլ տւինք քեզ սիրով,
Մեր որդկերանց և հարսների պիտոյքներից կտրելով.
Եւ ինչ մեղք ենք համարձակւել արքայիդ դէմ մենք գործել,
Որի համար խեղճերիս դէմ զրդուել ես, զայրացել...

XIII

«Ոչ՛ւր, լռո՛ւր», կանչեց արքան, Քաջի խօսքը կտրելով.
«Անօգուտ են այդ բոլորը, մինչ կորած էք ձեր դէնով»։
—Բայց մեր ուժից վե՛ր է, արքայ, քո պահանջը կրօնի դէմ
Մենք չենք կարող այդ կատարել. և կանգնած ենք ինչպէս վէմ։
«Դուք պիտ կանգնէք ուրեմն իմ դէմ», գոռաց արքան դիւաբար.
«Եւ կարծում էք, թէ իմ կամքը պէտք է մնայ անկատար»։
—Այո՛, այո՛, իշխանները միաբերան ձայն տւին.
Մենք չենք կարող գլուխ բերել քո պահանջն դժւարին։

XIV

«Ձեզ բոլորիդ սարսափելի տանջանքների կենթարկեմ,
«Մարդկանց առաջ քարշել կտամ, անգթօրէն կանարգեմ.
«Ուշքի եկէք. չէք ճանաչում արքաների արքային.
«Արևը վկայ, չեմ խնայի ոչ մի պատիժ երկրային։
—Ձո երկրային պատիժներից չենք վախենում, թագաւոր,
Որովհետև պաշտպան է մեզ Տէր Աստուածը երկնաւոր։
Այդ խօսքերը ամպրոպի պէս չար գազանին ցնցեցին,
Վերջին յոյսերն օդում, վերև, գոլորշու պէս ցնդեցին։

(Կը շարունակուի) Յ. Պետրոսեան

ՏՈՒԱՔՍԱՂ

I

Լրացրէք և դասաւորեցէք այս բառերը այնպէս, որ վերևից ներքև աւելացրած տառերով կարդացուի մի նշանաւոր մանկավարժի անունն ու ազգանունը։

հա—րա
առ—նց
սի—ակ
ծի—ան
քա—աք
ցն—րք
գա—ար

II

Ես միրգ եմ, փոխէք իմ մի տառը, երկրաչափական մարմին կը դառնամ. մէկ էլ որ փոխէք՝ ընծայ կը դառնամ։

ուռ—նի
ակ—նջ
աղ—սի
դա—ակ
ապ—կի
կա—էն
գե—ամ

Մ. Քեշիշեանց

Ազակերա Կարսի քաղաքային դպրոցի 2 բաժ.

Կովկ. Հ. Բ. Ընկ. Խուդադեան Որբանոցի ճաշարանում

Սկզբից նստածն է՝
Օր. **Վասիլ Նալբանդեան. Աշխատակցուհի Ալբիւրի «Մանկական Աշխարհիկ» և հեղինակ «Սիրոյ Բացատիկ» ֆէերիայի.**

Վերջից նստածն է՝
Օր. **Սօֆիա Մելիքեան որ «Սիրոյ Բացատիկ» ֆէերիայի երգերի հեղինակները յօրինել է և նոտաներով գրել։**

Մանկական Աշխարհ

IV տարի պատկերազարդ գլարք ամսաթերթ IV տարի

1912 թ. № Փետրուար

Հրատարակւում է մասնակցութեամբ ժրաջան աշակերտուհիների եւ աշակերտների

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՄԲԻԿ

Հասցէ՝ Բ. դասարանի Թիֆլիսի 4-րդ գիմնազիայի

ՄԵՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ո՜ւռռա, մենք մի փառաւոր, մի փայլուն, մի չքնաղ յաղթանակ ունեցանք։ Մեր Վարսիկը, որի առաջին բանաստեղծութիւնը կարդացիք արդէն Մանկական Աշխարհի նոր տարւայ №-ում, գրել է մի շատ ուշագրաւ ֆէեռիա 2 գործ. և 4 պատկերով Սիրոյ բանալին վերնագրով։ Իր ընկերակցուհի օր. Սոֆիա Մելիքեանն էլ շարադրել է երգերի եղանակները և այս անցած բարիկենդանին Կ. Հ. Բարեգործ Ընկ. յատուկ նորակառոյց բեմի վրայ փետր. 3-ին և 5-ին ներկայացրեց այս դեղեցիկ պիէսը։ Հանդիսականների մեծագոյն մասը՝ աշակերտ-աշակերտուհիներ, ուսուցիչներ, Բարեգործ. Ընկ. Խորհրդի անդամների ընտանիքները և մամուլի ներկայացուցիչներ էին։ Այսօր ես ձեզ չեմ պատմում այս պիէսի ոչ բովանդակութիւնը և ոչ էլ մանրամասն տալիս մեր ընկերակիցների կենսագրութիւնները։ Առայժմ այսքանս իմացէք, որ մեր Վարսիկը, Կ. Հ. Բ. Ը. սանն է, Խուդադեան որբանոցում, և սովորում է Թիֆլիսի Ցովհ. օր. դպրոցում, որի VI-րդ դասարանումն է, ինչպէս և իր ընկերակցուհի օր. Սոֆիա Մելիքեանը, որը բացի Ցոհաննեան դպրոցից՝ սովորում է երգ և նուագ Կայսեր. երաժշտ. ուսումնարանում իր հովանի տ. Սպենդիարեանի քնքոյշ և խնամատար հոգացողութեան շնորհիւ։

Ներկայացման մասնակցողները բոլորն էլ որբանոցի սաներն էին, իսկ երաժշտական խումբն ուժեղացրած էր Ցովհ. [illegible] բանի մի քանի երաժշտասէր աշակերտուհիներով։ Սրանց ղեկավարում էր ուսուցիչ պ. Դէմիրչեանը։

Երեկոյթի ընդհանուր ղեկավարն էլ գործավարուհի օր. Շուշանիկ Քանդարեանն էր, որ որբերին, հարազատ մօրից էլ աւելի, տասը տարուց ի վեր խնամում, գլխում, մեծացնում է։

Բոլոր հանդիսականները էլ շատ գոհ մնացինք այս ներկայացումից։ Տիգրան-քեռին շատ է հաւանել այս պիէսը և անսահման ուրախ է, որ մեր Վարսիկը այսպիսի սիրուն պիէս է գրել և ոմանց էլ՝ չար սև նախանձողներին էլ զայրացրել։

Ամբիկ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

—

Ինչպէս ալիքը ծփում է խաղաղ,
Եւ ծովում լողում նաւակը դանդաղ,
Այդպէս էր կեանքս մանուկ հասակում
Երբ դեռ մտած չէի կեանքի փոթորկում։

Անցան տարիները... Ես հասունացայ,
կեանքի մեծ խաչը պարզև ստացայ.
Դէմքիս ժպիտը իսպառ վերացաւ,
Կարիքն ու վիշտը ինձ ընկեր դարձաւ։

Ես այդ օրւանից դարձայ գլխիկոր,
Տխուր էր կեանքը, տխուր էր բոլոր...
Փիշեր ու ցերեկ չունէի դադար,
Սիրտս կրծում էր որդն անդադար։

Ո՜հ, ինչպէս դանդաղ անցնում էին օրերը,
Ամեն մի վայրկեան թւում էր ժամեր.
Ա՜խ, որքան կուզէի այդ քողը պատռել,
Նորից մանկութեան օրերս յետ դարձնել...

Ա՜ւաղ, ինչ արած, այդ չի յաջողւում,
կեանքը միշտ իր շաւղովն է գնում...
Դարձեալ ճնում եմ տխուր, մոլոր,
Ձեռքս ծոցումս, գլուխս միշտ կոր։

Վարսիկ

Սան Կ. Հ. Բ. Ը. և
VI-րդ դասատան աշակերտուհի Թիֆ. Ցովն. Մարբամ. օր. ուսուճ.

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ

(Հէքիաթ)

Կար ժամանակ, շունն ու կատուն իրար այնպէս էին բարեկամ, որ հարիւր դաւաղալմաղալով չէր կարելի բաժանել։ Եւ այդպէս էլ լինում է. երբ մէկը սուված կամ ծարաւ է լինում, նա իր նմաններին շուտ է գտնում և բարեկամանում։

Շատ հին ժամանակ մի կատու էր ապրում՝ անունը Վինա. նրան էր յանձնուած ամբողջ տան ու շտեմարանների մկների որսալն ու պատժելը։

Անցնում է մի քանի ժամանակ, և մեր կատուն բերում է երկու ձագ։ Երբ ձագերը չափահաս են դառնում, փոքրին պահում է իր մօտ, որպէս տան հոգսերին ու գործերին օգնական, իսկ անդրանիկ ձագին, ուղենալով ապագայում լաւ որսորդ դարձնել, որ մեծանալով կարողանայ իր ծնողներին ծերութեան ժամանակ պահպանել, յանձնում է իր դրացի և միակ հարուստ ուսուցչ կատուին, յուսալով որ ժամանակով մարդ կը դառնայ. իսկ ինքը օրեկան մի քանի մուկ որսալով տանում է վարպետին ընծայ։

Բայց ինչ արած, որ մեր կատուի ձագը անհնազանդ է գտնուում դէպի իր ուսուցիչը և շուտով վռնդուում է վարժարանից. այդ դեռ բաւական չէ։

Աբի տես, որ մեր կատուի ձագը ծոյլ ու անպիտան լինելով, ամբողջ օրեր պառկած արևի ճառագայթների տակ, արևկող անելով, փալասի, թելի հետ խաղալով, տանից էլ արտաքսուում է, որպէսզի յոյսները կարեն նրանից, որ իբրեւց պիտի ապահովացնի ապագայում, և գնայ իր գլխի ճարը տեսնի։

Բայց կատուի ձագը պակաս ուստայ չէր. ամեն օր, երբ բոլորը կը քնէին, նա իր սուր դունչը խրելով պատուհանի կոտրած ապակու արանքով, ներս կը մտներ, ու իր ուղածը ուտելով, կըշտանալով, դուրս կըզար և ամբողջ օրը կը պտտէր այգինեռում։ Բայց մինչև ե՞րբ. այդ էլ մի երկու օր, և այլևս անցքն ամրացրած է։

Վերջը, մի օր գլուխ է վերցնում ու գնում. երեկոյեան դէմ հասնում է մի անտառի ու մտածում է հնալ գիշերն այնտեղ։ Ի՞նչ անէր խեղճը. մի կողմից սովածութիւնն էր փորը փիթեցնում ու ստամոքսի պատերը բաց ու խուփ անում, միւս կողմից ծարաւը լեզուն պապակում, ձայնը կարում, խզացնում։ Եւ միայն այժմ իմացաւ ծուլութեան և աշխատանքի համը... բայց ուշ է արդէն։

Տեսնում է քթի տակ կանաչ, հիւթալի գիւղիւ խոտեր, ու փորձում ուտել. պոկում է մի քանիսը, ծամծմում ու վերածում, տեսնելով, որ իր կերակուրը չէ։ Ու

խեղճ մեր պարոն կատուն մլաւելով-կլաւելով, աչքերին հուփ տալով, մօտենում է մերձակայ գիւղին, որը գտնւում էր անտառից ոչ հեռու։

Ճանապարհին, որտեղից որ է, պատահում է մի շուն՝ Բոզարանունով։ Խեղճը հեռուից տեսնելով կատուին, նրա մլաւոցը լսելով, սկսեց գանգատւել իր բախտից, որ մարդիկ այդքան անգութ են վարւում դէպի անասունները և իրենց օգտակար կենդանիները։ Խեղճի ծերութիւնը մի կողմից, քաղցն ու երկար տարիներով աշխատելը միւս կողմից իրեն ուժասպառ էին արել։ Երբ մօտեցաւ կատուին, նա մտածում էր. «Չէ՞ որ կատուները շատ ճարպիկ և աշխոյժ են. է՛, ուրեմն էլ ինչ կայ մտածելու. հեռը կը բարեկամանամ, և այժմ լաւ ժամանակ է օգտւելու»։

—Բարև ուստայ փիսօ, —ասաց շունը, տեսնելով որ նա էլ է իր օրին, և միևնոյն ժամանակ նայելով կատւի աչքերին, որոնք քաղցածութիւնից աւելի էին ուռել ու լայնացել։

—Չէ՛, հաց չունեմ,—ասաց կատուն հազիւ լսելի ձայնով և միևնոյն ժամանակ բարկանալով շան վրայ։

—Ինչո՞ւ ես բարկանում, բարեկամ, չէ՞ որ ես ամբողջ օրը քո յետևից եմ մանգալիս։

—Չէ՛, չէ, ոսկոր չունեմ. թէ ուզում ես, արի ինձ կեր, որ ես էլ պրծնեմ այս աշխարհից։

—Ո՛չ, ոչ. ես քեզնից բան չեմ ուզում, բարեկամ. ես ասում եմ որ ես ու դու եղբայր ենք, որովհետև մեր նախնիքները այդպէս են կտակել. հասկացա՞ր։

—Ի՞նչ է, չըլինի՞ դու էլ ես իմ օրին,—ասաց կատուն։

—Ինչո՞ օրին. քաղցած եմ, քաղցած..., ասաց շունը ոռնալով։

—Դէ որ այդպէս է, չէ՞ս գայ գնանք մօտիկ գիւղը բան խընդրելու,—ասաց կատուն։

Ու միասին, իրար գարշ գրուցելով, գնացին հասան մօտիկ գիւղը։

Ճանապարհին տեսնում են՝ ծառեր են թռչկոտում գետնի վրայ, ու կարծես իրենց ծաղրում։ Կատուն, կարծելով՝ մուկ է, վրայ է վազում բռնելու, ու յանկարծ թուլացած ընկնում է գետնին։ Շունը վերցնում է բերանը և մի կերպ հասցնում տանտիրոջ բակը։ Տանտէրը դուրս է գալիս ու տեսնում է՝ շունն էլ նրա մօտ է պառկել, այլևս ոյժ չունենալով հասնել տանտիրոջ դռանը՝ հաց խնդրելու։ Տանտէրը մնում է զարմացած նայելիս։ Իսկ շունը, նկատելով, սկսում է հաց խնդրել հազիւ լսելի ձայնով։ Բերում են հաց են տալիս շանը, ջուր են ածում կատւի վրայ և մի կերպ կազդուրում. կատուն սկսում է կամաց-կամաց ուտել հացի կտորները։ Երբ բոլորովին սթափւում են, սկսում են խընդրել տանտիրոջ, որ իրենց ընդունի իր բակում ծառայելու։ Տանտէրը համաձայնւում է։

Շունը կանգնում է բակի պա-

հապան, իսկ կատուն՝ տան ու ամբարների մկների դատաւորը։

Անցնում է մի երկու շաբաթ։ Բոզարը կապած էր դռան առաջ հատ ու ամուր շղթայով, իսկ կատուն փափուկ անկողնի մէջ մռռալով քնած։ Բայց ով կասէ, թէ ով բերաւ այդ նախանձ ցեղը Բոզարի սրտին։ Նա ծերութեան հասակում ամբողջ օրը դուրսը կապած, խոնաւ, ցեխոտ գետնի վրայ և կերակրւելիս սեղանի ոսկորներով ու փշրանքով, իսկ կատուն ամեն ճաշին սեղանի մի ծայրին պպզած ուտում է տաք-տաք ու համեղ կերակուրներ։ Այսպէս մտածելով խեղճի օրն ու ումբրը հալ ու ժաղ էր եղել։ Շատ մտածեց, վերջիվերջոյ գտաւ մի հնար։

Մի անգամ, ինչպէս է պատահում, հացի սուփրան թափ տալու ժամանակ, հետը գցում են մի երկու արծաթէ գդալ, իսկ մեր ագահ շունը առանց նկատելու կուլ է տալիս ոսկորների հետ միասին։ Մի օր ճաշից յետոյ տանտէրը սաստիկ բարկացած է լինում աղախնի վրայ։ Բանից դուրս է գալիս, որ տանտիկինը չըկարողանալով պարզել բանի էութիւնը, թէ ով է վերցրել գդալները, յայտնում է մարդուն։ Հէնց այդ պատճառով տանտէրը սաստիկ յուզւած էր։ Ճաշից յետոյ, երբ դուրս է գալիս տնից մանգալու, Բոզարը կարում է տիրոջ առաջը և ընկնելով նրա ոտները սում է.

—Տէրն ապրած կենայ. այն գդալները, որի մասին վիճում էիք, ձեր սեղանին պպզող ու հաստաշլինք Փխոն է անցեալ օրը խաղալիս, թէ ամանները լպզտելու ժամանակ կոտրատել, հետն էլ մի ափսէ։

Տէրը զարմացած աչքերով նայում է շանն ու ասում.

—Ի՞նչ .. ասում ես .. դու տեսա՞ր...։

—Այո, տէրն ապրած կենայ. ես տեսայ,—արտասանեց շունը կմկմալով։

—Բայց ո՞րտեղ են կտորները, ասա՛ շուտով, և դու կըտեսնես թէ ինչ կը լինի Փխոյի օրը, այն Փխոյի, որ երէկ միւս օրը սուված սատկում էր,—ասաց գոռալով։

—Տէրն ապրած կենայ,—մրմռռաց շունը դողալով,—կտորները մկան յետևից խփելիս, ընկել է խոր-խոր ծակերը... տեղը չը գիտեմ... տէր... ապ...րած- կե... կե...

Տանտէրը բռնում է կատուին ու վզից մի ծանր քար կապելով, գցում գետի ջուրը, չը նայելով կատւի աղաչանք-պաղատանքին ու մլաւոցին։

Բայց ով զարմանք, որքան տրտմեց տէրը, երբ վերադարձին շան ժօտով անցնելիս տեսաւ գդալները շան աղբի մէջ.....

Էլ ինչ պատմիմ, ինչ բան. ինքներդ գիտէք։ Միայն այս կասեմ, որ Թունդ քացախն իր ամանը կը ճաքեցնի։

Յարութիւն Վերդեան

Երևանի Թեմ. դպր. III-րդ դաս. աշակ.

Սեւերը Ամերիկացոսուած

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

1797 թ. դեկտեմբերի 13 ին Հռենոսի վրայ գտնուող Դիւսսելդօրֆում ծնուեց Հայնէն։ Նա հրէական ծագումն ունէր. մայրը՝ մի կրթուած կին, հոգս էր տանում իր զաւակի դաստիարակութեան վրայ, բայց շատ էր անհանգստանում, երբ մտածում էր, թէ իր որդին մի օր բանաստեղծ է դառնալու, ուստի նա արգելում է տուբհան մէջ վարժուել. և այդ ժամանակ նա երազում էր որդու փայլուն ուսադիրների մասին։ Նապոլէոնի անկումից յետոյ՝ կուրացած Ռօչիլդի հարստութեամբ՝ որդուն ուզում էր ծանօթացնել առևտրի հետ, որպէսզի նա էլ փողի վեհապետ դառնայ։ Երբեմն էլ սեսնելով առևտրական ձեռնարկութիւնների դառն վախճա-

ՀԱՅՆԷ

նը՝ մտածում էր որդու նշանաւոր փաստաբան լինելու մասին և ուղարկում էր նրան համալսարանի իրաւաբանական բաժինը։ Բայց այդ բոլորից ոչ մէկը չէր համապատասխանում Հայնէի բնաւորութեան. նա այլ ձգտումներ ունէր... Այնուամենայնիւ բանաստեղծի սէրը դէպի մայրը չափ և սահման չունէր։

որդուն վէպեր կարդալը, թատրոն յաճախելը, որոնք կարող էին ազդել որդու երևակայութեան վրայ։ Երբեմն կուրացած Նապոլէոնի տիրապետութեամբ՝ նա ստիպում էր որդուն ռազմագի-

---

Օգտւած Вейнберг-ի „Жизнь Генриха Гейне“ *ընդարձակ կենսագրականից։*

Հայնէի մօրեղբայր Գեւղեոնը՝ գեղեցիկ և ազնիւ սրտի տէր, մեծ ազդեցութիւն է ունեցել պատանու բանաստեղծական հակումների վրայ։ «Դօն-Քիշոտի» և «Գուլիվերի» ընթերցանութիւնը այդ հասակում ոչ պակաս չափով իրենց դրոշմն են թողել պատանու մտքի թռիչքի վրայ։

Նրա արևելցուն յատուկ բոմանտիկ երևակայութիւնը մեծ անունդ էր ստանում սիրային յափշտակութիւններից հէնց պատանեկան հասակում. այդ ժամանակից սկսած նրա մէջ աճում են կասկածամտութեան (սկեպտիցիզմ) և «համաշխարհային թախիծի» սաղմերը, որ ապագայում նրա բանաստեղծութեան ոգին էին լինելու։

Հայնէի բանաստեղծական առաջին տողերը պարտական ենք մի ոմն Վերնիկայի, որի վրայ բանաստեղծը սիրահարւել էր դեռ ևս շատ տղայական հասակում։ Աւելի բոմանտիկ է եղել նրա երկրորդ սէրը 15 տարեկան հասակում դէպի Կարմիր Զէփխէնը։

Հայնէն ուսումնարանից շուտ է դուրս գալիս կեանքի մէջ, երբ նա 15 տարեկան էր։ Կեանքի անհամակրելի կողմերը մեծ սքանչացնում են տալիս նրա դէպի մարդիկ ունեցած երգիծական և յոռետես հայեացքին, որ առաջուց էլ նա ունէր։ Գործնական նպատակների ձգտող մայրը Հայնէին ուղարկում է Ֆրանկֆուրտ, ուր սա ծառայում է բանկիր Ռինդկօմպֆի կօնտորում, ապա մի վաճառականի մօտ՝ առևտրի դաղտնիքն ըմբռնելու համար։ Սակայն բանաստեղծը երկու անգամ միայն դիմացաւ այդ կեանքին։ Առևտրական աշխարհի կեղծիքները զզւանքով էին լցնում նրա քնքոյշ սիրտը։ Եւ ահա մի օր մեր գործակատարը փախչում է ծնողների մօտ։ Բայց մայրը ցանկանում էր, ինչպէս էլ լինի, իր որդուն փողի վհռահպետ դարձնել, ուստի շուտով ուղարկում է նրան այս անգամ Համբուրգ, որի մթնոլորտը աւելի է ճնշում բանաստեղծին, մանաւանդ այդտեղ առաջ եկած մի նոր և անբախտ սէրը, որ զարկ է տալիս նրա լիրիքական բանաստեղծութեան։ Նոր սիրոյ առարկան արթնացնում է բանաստեղծի մէջ ամենաքնքոյշ, ամենաքաղցր ըզգացմունքներ և մտքեր, բայց միևնոյն ժամանակ և սուր, դաժան երգիծանք, ծաղր, յուսահատութիւն. դա Ամալիա Հայնէն էր, բանաստեղծի մօրեղբայր Սողոմոնի դուստրը։ Ամալիան ա՛ տարբեր գտնւեցաւ դէպի բանաստեղծի սէրը և ամուսնացաւ մի վաճառականի հետ։ Այդ սիրահարութեանը նւիրւած ոտանաւորները ցոյց են տալիս, թէ ինչպէս էր ըմբռնում և արտայայտում իր սէրը 16 տարեկան պատանին, որ սիրոյ և համաշխարհային թախիծի ամենամեծ երգիչն էր լինելու։

Հայնէի ծնողները վերջապէս համոզւեցին, որ իրենց որդին վաճառական չէ կարող լինել.

մայրը մտածեց փաստաբան դարձնել նրան։ Իրաւաբանութիւն սովորելու հարցի հետ կապւած էր Հայնէի հրէական կրօնը թողնելու հարցը, որովհետև հրէաներին միայն բժշկական ֆակուլտէտ էին ընդունում։ 1819 թ. Հայնէն թողեց Համբուրգը և գնաց Բօննի համալսարան իբրև ազատ ունկընդիր։ Իրաւաբանական չոր ու ցամաք գիտութիւնը չէին կարող բաւարարութիւն տալ զգայուն բանաստեղծին։ Այդ համալսարանում նա լրիւ մի տարի էլ չը մնաց, տեղափոխելով Գէտտինգէնի համալսարանը. պատճառը յայտնի չէ։

Գէտտինգէնը, որի բնակիչներին Հայնէն սրամիտ կերպով բաժանում է չորս դասակարգի— ուսանողների, պրօֆեսորների, իմաստակների և անասունների, առաջ նրա թւեց բանաստեղծի երգիծական դիտողութեան։ Այստեղ Հայնէն միայն 14 ամիս մնաց. դուրս գալու պատճառն այն է, որ նա և մի ուսանող դասարկ տեղը մենամարտի ցանկացան դուրս գալ, սակայն այդ գլուխ չեկաւ, որովհետև համալսարանի վարչութիւնն իմացաւ վաղօրօք և Հայնէին կէս տարով արձակեց. սա չը սպասեց ժամանակամիջոցին և ծնողների կամքով գնաց Բերլին ուսանելու։ Սկսւում է բանաստեղծի թէ արտաքին և թէ ներքին կեանքի մէջ մեծ փոփոխութիւն։

Բերլինում անցկացրած օրերը Հայնէի կեանքում ամենափայլուն օրերն էին. ուսանողական փակ սենեակից նա ընկաւ հասարակական եռուն կեանքի մէջ, փիլիսոփայական գաղափարների միջավայրերը. րոմանտիզմի և վերացականութեան մութ աշխարհից՝ իրականութեան պայծառ աշխարհը։ Սակայն այստեղ էլ նրա կեանքի ընթացքը փոխւում է, մանաւանդ այն ժամանակ, երբ Հայնէն լսում է, որ իր սիրելի Ամալիան ամուսնացել է. նա կապ է հաստատում այնպիսի շրջանների հետ, որտեղ թագաւորում էր անժուժկալութիւնը, հաճոյքը, քէֆը... այդօրինակ կեանքը շատ վատ ազդեցութիւն է ունենում բանաստեղծի առողջութեան վրայ։

Ամալիայի սեղ շուտով գրաւում է Հայնէին տիկին Ֆրիդլէնդեռը, որի հետևանքը լինում է այն, որ Հայնէն արտաղրում է մի շարք ամենափայլուն և զեղուն զգացմունքներով ներշնչւած բանաստեղծութիւններ։ 1821 թ. սկզբին այդ ոտանաւորները նախկին գրածների հետ լոյս տեսան մամուլի մէջ, իսկ տարւայ վերջը՝ առանձին գրքով։ Քննադատութիւնը նպաստաւոր կարծիք յայտնեց Հայնէի այդ գրւածքների նկատմամբ։ Քննադատներից մէկը ուշք դարձրեց Հայնէի համամաշխարհային թախիծի վրայ, թախիծ, որ հետևանք է բանաստեղծին շրջապատող գարշելիութեան, զզւելիութեան, ստորութեան և դատարկութեան։ Մի ուրիշը համեմատում էր նրան

Բայրօնի հետ։

1823 թ. լոյս տեսան Հայնէի երկու ողբերգութիւնները—Ալմանզօրը և Ռամթըլիֆը, որոնցից ա—ն սկսած էր Գէտտինգէնում, բ—ն գրուած էր Բերլինում 3 օրուայ ընթացքում։ Որպէս դրամատիք գրուածք սրանք արժէք չունեն, այլ աչքի են ընկնում լիրիքական գեղեցկութեամբ։ Այս գրուածքների հետ, իբրև յաւելուած, հրատարակեցին մի շարք ոտանաւորներ՝ լիրիքական միջադէպ (Liriches Intermezzo) վերնագրով, որոնք իրենց նեղդաշնակութեամբ և գեղեցկութեամբ միանգամից հռչակեցին Հայնէին. ամբողջ Գերմանիան երգում էր նրա երգերը, շատ բանաստեղծներ նմանուում էին նրան։ Բայց կային և այնպիսիք, որոնք չէին խնայում մատաղ բանաստեղծին՝ յարձակուելով նրա վրայ ամենակծու յօդուածներով։

Հայնէն իր քայքայած առողջութիւնը վերականգնելու համար շուտով գնում է Ծովափնեայ Կուզհաուզէն. ծովը մեծ նիւթ է տալիս նրա բանաստեղծական հանճարին։ 1824 թ. նա ճանապարհորդում է Հարց լեռներով և Թիւրինգիայով. գալով Վայմար՝ նա տեսնուում է Գէօթէի հետ։ Այդ ճանապարհորդութիւնը շատ փրկարար է լինում բանաստեղծի համար, ինչպէս ինքն է ասում։ 1825 թ. նա Գէտտինգէնի համալսարանում աւարտական քննութիւն տուեց և իրաւաբանական գիտութիւնների դոկտորութեան երրորդ աստիճան ստացաւ։

Նոյն թուի յունիսի 28-ին նա քրիստոնէութիւն է ընդունում լուտերական դաւանանքով։ Դա մի հակասութիւն էր, որ թոյլ տուեց Հայնէին միայն գործնական նպատակների, միջոցներ գտնելու համար։ Նա շատ վաղ է զղջում իր արած քայլի համար, այժմ ատելի դառնալով թէ հրէաներին և թէ քրիստոնեաներին, որոնք շարունակում էին նրան ջհուդ անուանել... բայց արդէն ուշ էր։ Կեանքի այս շրջանում, երբ նրա հանճարն ամենածաղկած դրութեան մէջ էր, նա, չը նայած իր հպարտ հոգուն, ստիպուած է լինում շատ ստորացումներ տանել։ Համբուրգում երդուեալ թշնամիք սկսում են անհանգստացնել Հայնէին իր մօրեղբայր Սողոմոնի մօտ, որ մինչև այժմ նիւթականով միշտ օգնել էր բանաստեղծին։

Այս դրութեան մէջ 1826-ին լոյս են տեսնում նրա ճանապարհորդական պատկերները և մի շարք ոտանաւորները։ Պատկերների մէջ նշանաւոր էր ճանապարհորդութիւն Հարցլեռներում, որ ներշնչուած է խորը երգիծանքով, համաշխարհային թախիծով, երևակայութեամբ և իրականութեամբ, որպիսին չէր տեսել Եւրոպական գրականութիւնը։ Այս գրուածքի հետևանքը եղաւ մի կատաղի հալածանքի բռնկումը Հայնէի դէմ, որի պատճառով Հայնէն ստիպուած եղաւ գնալ Լոնդոն՝ ճանապարհորդական պատկերների 2-րդ հատորը հրատարակե-

լուց յետոյ։ Անգլիայից նա կրկին գալիս է Համբուրգ և հրատարակում է իր մինչև այժմ արտադրած բոլոր երկերը Գիրք Երգերի խորագրով։ Այս ժամանակամիջոցում է, որ նա մի քաղաքագիտական թերթի խմբագիր է դառնում և կէս տարի յետոյ թողնում է այդ պաշտօնը։ Սրանից յետոյ նա ճանապարհորդում է Իտալիա-արեւտի աշխարհը։ Այստեղ ստանալով ծերունի հօր հիւանդութեան լուրը՝ վերադառնում է Համբուրգ, բայց հօրը մեռած է գտնում, ուր մօր հետ միասին ժամանակ մնալուց յետոյ գնում է Բերլին։ Շուտով հրատարակում է իր ճանապարհորդական պատկերների գ. հատորը, որ արգելւում է Պրուսիայում։

Այդ ժամանակները Ֆրանսիայում բռնկւում է յուլիսեան յեղափոխութիւնը, որ ազդում է նրա արտադրութիւնների վրայ. այժմ նա քաղաքական տեսիլների երգիչ է դառնում։ Հայնէն վճռում է գնալ յեղափոխութեան հայրենիքը՝ 1831 թ. բանաստեղծը հասաւ Պարիզ։

Այստեղի ուրախ կեանքը լաւ ազդեցութիւն ունեցաւ Հայնէի վրայ. նա ծանօթացաւ ականաւոր մարդկանց հետ։ Պարիզում Հայնէն իր գրւածքների մեծ մասը գրում էր ֆրանսերէն և ապա թարգմանում գերմաներէն։

Շուտով նա ծանօթանում է Եւգենիա (Մաթիլդա) անունով մէկի հետ, որի հետ 1841-ին Հայնէն օրինաւոր կերպով ամուսնում է։ Եւգենիան մի հարստի ապօրինի աղջիկ էր, հօրից մերժւած. նա կրթութիւն չունէր։ Երկու ամուսիններն ապրում էին շատ սուղ միջոցների մէջ. Հայնէն քանի հազար ֆրանկ պարտքի տակ էր ընկել. մօրեղբայրն սկսեց աւելի փող ուղարկել, խոստանալով, որ բանաստեղծի մահից յետոյ նրա կնոջը ամեն տարի կենսաթոշակ կը տայ։

Հայնէի քայքայւած առողջութիւնը գնալով վատանում էր. երբեմն նա ուշաթափւում էր, նրա աչ ձեռքը սկսել էր թուլանալ, աչքացաւը սաստկանում էր. Շուտով նրա մօրեղբայրն էլ մեռնում է՝ կտակելով Հայնէին իր միլիոններից միայն 8000 ֆրանկ... կենսաթոշակի մասին ոչ մի խօսք չը կար, ուստի ծերունու ժառանգները հրաժարւեցին Հայնէին նպաստելուց։ Այդ բանը մեծ զայրոյթ պատճառեց բանաստեղծին։ Ժառանգներն այդպէս վարւեցին, իմանալով, որ Հայնէն իր հրատարակելի Ծիշատակարանի մէջ կպել էր իրենց հօրը. նրանք առաջարկեցին հրաժարել այդ մերկացումից. և բանաստեղծը ստիպւած գրեց նրանց, թէ հրաժարւում է...

Վերահաս անբախտութիւնները աւելի և աւելի քայքայում էին նրա առողջութիւնը. նրա աչ աչքը կուրացաւ։ Պրուսական կառավարութիւնը թոյլ չը տւեց նրան վերադառնալ Բերլին՝ առողջանալու նշանաւոր բժշկի մօտ։ Բանաստեղծի մատները և աչ ոտքը կորցրին իրենց զգայութիւնը. նա չէր կարողանում գրել, չէր կարողանում կերածը մարսել, նիհարում էր. նրա կեանքը դժոխային էր դարձել. սարսափելի ցաւը տանջում էր նրան։ Այդպիսի դրութեան մէջ նա յաճախ մտածում էր ինքնասպանութեան մասին։ Չը նայած այդ տառապալից կեանքին՝ նրա միտքը և հոգին չէին ընկճւում, երբեմն-երբեմն նա արտադրում էր հիասքանչ և գրաւիչ ոտանաւորներ։ 1856 թ. Հայնէն մեռաւ, կիսատ թողնելով իր Ծիշատա-

կարանը, որի վրայ մահւանից նոյն իսկ 4 օր առաջ աշխատում էր։ Ճիշատակարանը (600 թերթ) միայց այրի կնոջ մօտ, ձեռքէ-ձեռք անցաւ, մի մասը ոչնչացրին, և միայն մի մասը լոյս տեսաւ կրճատումներով։

Այդպիսի եղերական վախճան ունեցաւ Հայնէն, սիրոյ եւ համաշխարհային թախիծի ամենամեծ բանաստեղծը, Գերմանիոյ պայծառ աստղը...

Յարութիւն Պետրոսեան



ՀԱՅՆԷԻՅ

Երբ հիասքանչ մայիս ամսին
Փթթում էին ծաղիկները,
Այն ժամանակ իմ սրտի մէջ
Ծնունդ էր առնում մաուղ սէրս։

Երբ հիասքանչ մայիս ամսին
Երգում էին թռչունները,
Յայտնում էի յայնժամ ես քեզ
Իմ բաղձանքներ և տենչեր։

Գերմ. բառզմ. Յարութիւն Պետրոսեան

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՆԱԻԻ ՎՐԱՅ

Մի երկու օրից յետոյ, ըստ սովորութեան, Տօբին ու Մալին էլի սկսում էին իրանց պարոնի տան առաջ փոքր մասսայի գալուն։ Արեգակը արդէն բաւականին բարձրացել էր, բայց Էդուարդը դեռ չէր երևում։ Զընայելով այդ բանին տղերքը չէին համարձակւում հեռանալ տանից, մինչև որ մի ծեր սպրուկ եկաւ և ասաց նրանց, որ նրանք այսօր հարկաւոր չեն լինի։

—Գնացէք, տղերք, ասաց նա բարեսրտութեամբ և երկու ձեռով շփում էր Տօբիի ու Մալիի բրդոտ գլխները։ Գնացէք իմ պատասխանատուութեամբ և խաղացէք, ինչտեղ կուզէք։ Մասսա Էդուարդը այսօր ժամանակ չունի ձեզ չարչարելու համար։

—Ինչի՞, հարցրեց Տօբին։ Հիւանդ է։

—Ո՛չ, բայց նա կամենում է իր մօր հետ մի մեծ ճանապարհորդութիւն անել ծովով դէպի Անգլիա, պատասխանեց ծեր ծառան։

Պայծառ փայլեցին Տօբիի աչքերը։ Ահա, նա գնում է այստեղից, գոչեց նա ուրախացած և ծափահարեց ձեռներով։ Այս շատ լաւ է։ Ուրախացիր, Մալի։ Անգլիան շատ հեռու է այստեղից, և շատ ժամանակ կանցնի, մինչև նա կը վերադառնայ և էլի կը չարչարէ մեզ։ Ծիծաղիր, Մալի, ուրախացիր։ Հիմա ազատուեցանք նրա ձեռից։

Մինչև որ Մալին կը պատասխաներ, Տօբին աղաղակեց բարձր ձայնով և երեք քայլ թռաւ մի կողմը։ Էդուարդը թաք էր կացել մօտ տեղում, լսել էր Տօբիի խօսքերը և մի աքացիով պատասխանեց նրան։

—Մի ուրախանար այդպէս շուտ, թէև փուճ կենդանի, գոռաց Էդւարդը։ Դու և Մալին պիտի հետս գաք և ճանապարհին աւելի կը չարչարեմ ձեզ, քան թէ մինչև հիմա։ Սպասեցէք միայն, դուք ինձ պիտի լաւ ճանաչէք, անհնազանդ աւազակներ։

Մի սպառնալի հայեացք էլ ձգեց նա վախեցած տղերանց վրայ ու հեռացաւ։ Լուռ ու շփոթւած Տօբին ու Մալին նայում էին միմեանց։

— Ա՛յ քեզ դժբաղդութիւն, վերջապէս ասաց Մալին։ Ինչի՞ չես լուռ կենում, ինչի՞ ես այնպէս բարձր խօսում, որ ամենքն էլ լսում են։ Հիմա անցաւ ուրախութիւնը, անցաւ ծիծաղն ու զւարճութիւնը։ Մասսան այդ չի մոռանայ, մեզ հետը կը տանէ և կը ձգէ ծովը, որ շնաձկները ուտեն մեզ։ Ո՛հ, Տօբի։

— Ո՛չ, ո՛չ, Մալի, նա այդ չի անի. այդ նրան էլ աժան չի նստի, շուտ պատասխանեց Տօբին։ Մի տրտմիր, Մալի։ Կարելի է նաւի վրայ աւելի լաւ լինի, քան թէ այստեղ։ Մասսա Էդւարդը նաւի վրայ կարող չէ կառքով զբօսնելու գնալ և մենք ձի չենք լինի։ Եւ շատ կարելի է, որ Մալայների նաւերը գան ու մեզ գերի տանեն, այն ժամանակ մնասա եմ ես, Մալայ տղաս և մասսան պիտի ինձ հնազանդի։ Քեզ էլ, Մալի, որովհետև դու իմ բարեկամն ես, այն ժամանակ դու էլ ինձ պէս մասսա կը դառնաս։ Ուրեմն էլի ուրախացիր, Մալի, ծիծաղիր, խնդա, եթէ կը գան Մալայների նաւերը, մասսաները ենք և այն ժամանակ մեր հերթն է։ Զգո՛յշ կաց, մնասա Էդւարդ, դու ինձ շատ ես հայհոյել, ոտներով կոխոտել, ծեծել ու չարչարել, և հիմա Տօբիի հերթն է։

—Ի՞նչ ես այդքան յիմար-յիմար դուրս տալիս, ասաց Մալին։ Ի՞նչ գիտես, արդիօք կը գան Մալայների նաւերը։ Իսկ եթէ չըգա՞ն։ Աւելի լաւ չէ՞, որ մենք միանք այստեղ ու մասսան դնայ։ Բայց գան էլ, դու չես համարձակւի վրէժ առնել, այլ պիտի ներես, ինչպէս սև քահանան ասում է։

Տօբին ծիծաղեց չարութեամբ։

— Վա՛, սև քահանան, ասաց նա։ Տօբին Մալայ է, ոչ թէ քրիստոնեայ։ Նրան ինչ հարկաւոր է լսել սև քահանային։ Տօբին ուզում է վրէժ առնել մասսայից, և կառնէ։ Մի վախենար, Մալի, դու էլ ձի չես լինի, Տօբին էլ ոչ, յոյս ունեմ, որ ոչ։ Բայց ելի, հեռանանք այստեղից, մասսան կարող է լսել մեր խօսածը և կարելի է վերջն էլ հետը չըտանէ մեզ։ Ե՛կ, բարի Մալի և ուրախ կաց. իմանո՞ւմ ես, ուրախ կաց, երբ որ նաւի վրայ կըլինենք, այն ժամանակ կազատւենք և էլ ստրուկ չենք լինի. այ կը տեսնես։

Զարմացած նայում էր Մալին իր ընկերին, որի սև աչքերը

փայլում ու վառվռում էին աքանչելի կրակով։ Նա գնաց նրա հետ դէպի բանիանի անտառիկը և այստեղ մնացին նրանք առանձնացած, հանդարտ խօսակցելով իրար հետ։

Մէկ շաբաթից յետոյ կանդնած էր Կալկաթայում Գ. Վէստէրնի պալատի առաջ մի գեղեցիկ սրընթաց նաւ և սպասում էր իր ճանապարհորդների գալուն։ Այդ նաւը Գ. Վէստէրնի սեպհականութիւնն էր և նշանակւած էր նրա կնոջն ու որդուն Անգլիա տանելու։ Կամենալով, որքան կարելի դուրեկան անել ժամանցը նաւի վրայ իր կնոջ ու որդու համար առաջիկայ երկար ճանապարհորդութեան ժամանակ, Գ. Վէստէրն հրամայել էր մեծ սենեակը նաւի վերին տախտակամածում պատրաստել ամենայն շքեղ ու յարմար կերպով։ Այդ գեղեցիկ սենեակը փայլում էր ոսկեզօծութեամբ և չքնաղ նկարներով։ Կակուղ բազմոցներ շարած պատերի մօտ, մի փոքր մատենադարան միստրիս Վէստէրնի և Էդուարդի ընթերցանութեան համար դրած էր փայտէ սեղանի վրայ. կակուղ, թանկագին գորգեր ծածկում էին յատակը, մի խօսքով ոչինչ պակաս չէր, որ կարողանար զգալի լինել ճանապարհորդներին և թւար նրանց, թէ նրանք իրանց սովորական շրջակայքում չեն։

Տօբին և Մալին, որոնք առաջուց ուղարկւած էին նաւը, մեծ զարմանքով դիտում էին սենեակի թանկագին գահաւորութիւնը, որ ի հարկէ շատ զարմանալի կերպով զանազանւում էր այն փոքր ու մութը ծակից, որ միջին տախտակամածում նշանակւած էր նրանց բնակութեան համար և հազիւ այնքան տարածութիւն ունէր, որ երկու անկողին կախւէին իրար մօտ։ Բայց այդ բանի վրայ տղերքը շատ քիչ կամ թէ ամենևին չըտխրեցան, որովհետև ուրիշ լաւին սովոր չէին, և լաւ եղանակին կարող էին ճաշել տախտակամածի վրայ։ Եւ երբ որ նրանք բաւական դիտել ու հիացել էին այս գեղեցիկ նաւի վրայ, այստեղ նստեցին և երկբայութեամբ նայում էին իրանց առաջ։ Տօբին մի փոքր տխրել էր և Մալին երբեմն շարժում էր բրդոտ գլուխը, երբ որ նրա աչքը— և այդ շուտ շուտ էր պատահում—ընկնում էր փայլուն թնդանօթների վրայ, որոնցով զինւած էր այս նաւը։

— Ես էլ ամենևին յոյս չունեմ, բաւական երկար լռութիւնից յետոյ ասաց նա իր ընկերի ականջում և մատով կամաց խթեց նրան, որ զարթեցնէ նրա ուշադրութիւնը։ Նաւը շատ մեծ է և հեռը տասներկու թնդանօթ է տանում ու շատ էլ մարդիկ։ Ի՞նչ կարող են անել սրա դէմ Մալայների նաւերը։

Տօբին գլուխը բարձրացրեց և աչքերը մեն ածեց փայլուն թնդանօթների վրայ և յոգւոց հանեց։ Ի հարկէ, ասաց նա, նաւը

մեծ է և լաւ զինուած, բայց բոլորը մէկ է, Մալայները արդէն սրանից մեծերին տիրել են։

— Ես այդ չըգիտեմ, պատասխանեց Մալին, բայց նաւը շատ մեծ է և ցածում, զինաթրանում, շատ թնդանօթներ ու հրացաններ կան։ Կը սպանեն բոլոր Մալայներին, եթէ կը գան։

Տօբին գլխով արեց, ակամայ հաստատելով իր բարեկամի կարծիքը, ու տխրեց, բայց էլի շուտ ժողովեց իրան։

— Համբերութիւն, Մալի, ասաց նա։ Եթէ մեզ իմ երկրացի Մալայներն էլ չազատեն, կարելի է, որ էլի ստանանք ազատութիւն։ Ճանապարհը մինչև Անգլիա երկար է և նաւապետը ասաց ինձ, որ չորս ամիս կանցնի մինչև մենք կը հասնենք մեծ քաղաքը՝ Լօնդօն։ Սա բաւական երկար ժամանակ է, և մենք կարող ենք գործ գնել նրան փախչելու համար։

— Փախչե՞լ, ասաց սև տղան։ Ո՞ր կողմը։ Չորս կողմը ծով է։ Մալին կարող չէ վազել ջրի վրայ, կը խեղդւի։ Այս լաւ չէ, Տօբի։ Բայց աւելնք թէ կարողանանք էլ, դրանից մեզ ինչ օգուտ։ Մենք փող չունենք, որ ապրենք, ուրեմն սովամահ կը լինենք։ Այս էլ լաւ չէ։ Ամենից լաւն այն է, մենք միանք տնկարանում. երբ որ մասսան կերթայ, այն ժամանակ նա մեզ էլ չի չարչարի։

—Ո՞վ գիտէ, պատասխանեց Տօբին։ Նաւի վրայ էլի միշտ կարող ենք յոյս ունենալ, որ մի այնպիսի բան պատահի, որից կարող ենք օգուտ քաղել. իսկ տնկարանում միշտ ստրուկ կը միանք, իսկ Տօբին չէ ուզում այլևս ստրուկ լինել։ Համբերութիւն, Մալի, ճանապարհը մեծ է և ճանապարհորդութիւնը երկար կը տևէ։

Մալին ոչինչ պատասխան չըտուեց, որովհետև նա մանկակից էր իր ընկերի յոյսերին։ Լուռ նստած էին տղերքը իրանց տեղը, մինչև ափի վրայ մի շարժում սկսւեց, և նրանք նկատեցին, որ ափից մի նաւակ հեռացաւ, որ արագութեամբ մօտենում էր նաւին, և մի քանի րոպէի մէջ հասաւ նրան։ Նաւի սանդուխքը վայր թողին, և միստրիս Վէստերն և Էդւարդը բարձրացան նաւի վրայ։ Ամենամեծ յարգանքով և պատւով ընդունեցան նրանք. նաւի բոլոր մարդիկ միաձայն «հուրրա» կանչեցին. թնդանօթները արձակեցան և գոյնզգոյն դրօշակներ փրփրում էին կայմերի ծայրերին։ Մինչդեռ Էդւարդի մայրը քաղցր խօսքերով և ողջոյն տալով շնորհակալութիւն էր անում նաւի մարդկանց նրանց ուշադրութեան համար, ինքը, Էդւարդը գնում էր հպարտ քայլերով նաւաստիների շարքերի մէջ և գոռոզ հայեացքներ էր ձգում դէս ու դէն։ Տեսնելով Տօբիին ու Մալիին, չարութեամբ ժպտաց նա և ցոյց տւեց սխմած բռները, կարծես ուզում էր ասել.» Սպասեցէք,

հս ձեզ ցոյց կը տամ։ Դուք պիտի ճանաչէք իմ զօրութիւնը»։ Նաւապետին ամենևին չէր պատուում և նաւաստիներին ծամածռութիւններ անում երեսով։ Բայց շուտով իր մօր հետ գնաց սենեակը, ուր տարաւ նրանց նաւապետը և սպաներից մէկը հրամայեց նաւաստիներին՝ գնալ իրանց տեղերը։ Նաւաստիները ցրուեցան, բայց, ինչպէս երևում էր, ամենևին գրաւած չէին նրանց սրտերը փոքր ճանապարհորդի շնորհով, որին նրանք եւրոպա պիտի տանէին։

—Գոռոզ տղայ, ասաց նաւաստիներից մէկը։ Այնպէս դէս ու դէն է նայում, կարծես թէ մենք նրա կօշիկների փոշուց էլ վատ լինենք։

— Արդէն կը հանդարտուի, ասում էր մէկ ուրիշը ծիծաղելով։ Թող չը կարծէ, որ նա մի ծեր նաւաստիի հետ էլ կարող է այնպէս խաղալ, ինչպէս տանը իր ստրուկների հետ։ Այս ողորմելիները, ի հարկէ, ամեն բան պիտի հաւքերեն. բայց ինձանից թող հեռու կենայ, եթէ չէ ուզում փորձել, թէ չեանի ծայրը ինչ համ ունի։ Երկարաքիթ տղայ։

Մի րոպէից յետոյ բարկացած դէմքով դուրս եկաւ նաւապետը սենեակից, ուր նա տարել էր ճանապարհորդներին, և հրամայեց խարիսխը վեր քաշել։ Այդ միջոցին նա դարձաւ դէպի իր առաջին տեղակալը ու ասաց։ Շատ մանրակրկիտ տղայ է միստէր Վէստերնի որդին։ Ոչինչ բան չէհաւանեց սենեակի մէջ, չընայելով որ այնպէս գեղեցիկ զարդարուած է սենեակը, որպիսին մարդ միայն կարող է ցանկանալ։ Բազմոցները շատ կոշտ են, հայելիները պղտոր, գորգերը կոպիտ,—համարեա թէ խելագարուեցայ։ Լիրբ տղայ։ Աւելի լաւ կը լինէր տանն էր մնացել։

Եւ այսպէս ահա տեսնում ենք, որ Էդուարդը նաւ եկաւ թէ չէ, իսկոյն հեռացրեց իրանից նրա բոլոր մարդկանց և յետոյ էլ ամենևին չէր աշխատում, որ այս առաջին վատ տպաւորութիւնը անցնի իր ապագայ վարմունքով։ Ընդհակառակը, այնպիսի բաներ էին պատահում, որոնք նրան բոլորովին աւելի սրին նաւաստիներին։

Առաջին օրերում Էդուարդը չէր երևում տախտակամածի վրայ, թէև եղանակը շատ գեղեցիկ էր, որովհետև ծովային հիւանդութիւն ունէր, որ նա ստացել էր ճանապարհ ընկնելուց մի փոքր առաջ։ Բայց հէնց որ առողջացաւ, դուրս եկաւ և գոռոզարար հարցրեց նաւի վրայ ծառայող տղային Տօբիի ու Մալիի մասին։

—Չըգիտեմ, կարճ պատասխանեց տղան ու հեռացաւ։

Էդուարդը այնպէս զարմացաւ այս կարճ ու կոպիտ պատաս-

խանի վրայ, որ մոռացաւ իր սովորութիւնը և տղային ծեծելու կամ հայհոյելու տեղ, միայն լի զարմանքով նայում էր նրա երեսից։ Ինչ յետոյ յետ դարձաւ այն տղան և Էդուարդն էլ արդէն թողել էր իր զարմանքը։

— Լսիր, էյ, ձայն տուեց նա նրան։ Քեզ եմ հարցնում, ուր են Տօբին ու Մալին։ Պատասխան տուր. շուտ։

— Զըգիտեմ, պատասխանեց տղան սառնութեամբ և առաջ գնաց, առանց մի վայրկեան կանգնելու, որովհետև նա մի բաժակ գրօգ էր տանում նաւավարի համար—նաւավարները շատ սպասել չեն սիրում։ Եթէ Տօմը—այսպէս էր այն տղայի անունը—միայն կէս րոպէ ուշանար, այն ժամանակ անպատճառ պատրաստ պիտի լինէր մի քանի հատ հարուած ստանալու չափի ծայրով։

— Զըգիտե՞ս, յիմար տղայ, կանչեց Էդուարդը և մի սաստիկ հարուած տուեց նրա կողքին, ուրեմն իմացիր և շուտ պատասխան քեր, շո՛ւտ։

Տղան էլ պակաս չը զարմացաւ այս անակնկալ հարուածի վրայ, ինչպէս մի փոքր առաջ Էդուարդը։ Բայց նա աւելի շուտ ժողովեց իրան, քան թէ սա։ Սառնութեամբ դրեց նա մի կողմ գրօգի բաժակը, որը համարեա թէ մինչև կէսը թափուել էր և սկսեց իր սև, ուժեղ, ծանր ձեռը։

— Անօրէն, ցամաքի մէկ ասաց նա դու ես պատճառը, որ նաւավարը կը ծեծէ ինձ, որովհետև ես նրա գրօգը թափեցի, բայց կը տեսնես, որ դու էլ դատարկ չես մնայ։

Վերջին խօսքը ասելով այնպէս պինդ ապտակեց նա Էդուարդի երեսին, որ այս գոռոզ տղան, որ ի հարկէ չէր սպասում նրանից այդ յանդգնութիւնը, իսկոյն մէջքի վրայ գետին ընկաւ և մի զոյգ հարցական նշանների պէս բարձրացրեց ոտները դէպի երկինք։ Նա գոռում էր կատաղութիւնից, բայց նաւի վրայ ծառայող տղան, առանց նրա վրայ ուշադրութիւն դարձնելու, նոյն սառնութեամբ վեր առաւ գետնից գրօգի բաժակը և տարաւ նաւավարին, որ իրաւ մի քանի պինդ հարուածներ տուեց նրան չափի ծայրով։ Տօմը սառնութեամբ ընդունեց այս պատիժը, բայց մոթմոթում էր յետ գալիս։ Սպասի՛ր. այ տղայ, ես քեզ այս միտը կը բերեմ։ Նաւավարի այն հարուածները իզուր տեղ չեմ ստանայ ես։ Մի պինդ աքացի էլ տուեց նա իր թշնամի Էդուարդին, որ դեռ էլի գոռալով ընկած էր տախտակամածի վրայ, մի բարկացած հայեացք ձգեց նրա վրայ և հանդարտ առաջ գնաց։

— Տէր Աստուած իմ, միստէր Էդուարդ, ինչ է պատահել ձեզ, ասաց նաւապետը, որ վերջապէս լսել էր նրա աղաղակը և շտապով եկաւ որ բարձրացնէ նրան։

— Այն շուն տղան աչքիս խփեց, կանչեց Էդուարդը և երկու ձեռով բռնած ունէր իրաւ որ փոքր ինչ ուռած և կապտած աչքը։ Ի՛ա պիտի մարակով ծեծէի, մինչև արիւնը դուրս գայ, նաւապետ, պիտի ծեծէի, պիտի կախէի նա։ Ես այդպէս եմ կամենում. անզգամը։

— Բայց, Տէր Աստուած, պատճառն ի՞նչ էր, որ այն տղան զարկեց ձեզ, հարցրեց նաւապետը։ Երևի դուք պատճառ էք տուել նրան, որովհետև նա երբէք չէր համարձակւի այդ բանն անել։

— Պատճառ, դոռաց Էդուարդը։ Ոչինչ չեմ արել այն կոպիտ ու անքաղաքավարի տղային։ Ծեծեցէք նրան մարակով, նաւապետ, ծեծէք մարակով։

— Ո՛չ, սիրելի պարոն, պատասխանեց նաւապետը։ Այստեղ նաւի վրայ այնպէս հեշտ չէ այդ, ինչպէս ձեր տանը։ Այս մարդիկ ձեր ստրուկները չեն, դուք պէտք է լաւ իմանաք այդ բանը։ Բայց ի՞նչպէս էր բանը, ծակ, հարցրեց նաւապետը մի նաւաստիից։ Դու այն միջոցին այստեղ կը լինէիր։

— Ի հարկէ, պարո՛ն, պատասխանեց այս մարդը և յարգանքով վեր առաւ գլխարկը։ Տօմը մեղաւոր չէ, և ես նրա տեղ աւելի սաստիկ կը պատժէի այս փոքր պարոնին։

Մի քանի խօսքով պատմեց նա եղելութիւնը, որի դէմ Էդուարդը ոչինչ չըկարողացաւ ասել, և նաւապետը ուսերը վեր քաշեց։

— Շատ ցաւում եմ, որ ձեզ այդ անախորժութիւնը պատահեց, ասաց նա, բայց դուք ինքներդ էք եղել պատճառը։ Հետևեցէք իմ խորհուրդին և այսուհետև մի փոքր աւելի քաղաքավարի վարուեցէք մարդկանց հետ, այն ժամանակ այդպիսի բան էլ չի պատահի։

— Ի՞նչ, այն անպիտանը պիտի չը ծեծէի՞ մարակով մինչև որ միսը ոսկորներից թափւի, դոռում էր Էդուարդը և կատաղութիւնից գետնի՛ն էր տալիս ոտները։

— Ի հարկէ, ո՛չ, փոքր պարո՛ն, պատասխանեց նաւապետը բարկացած։ Ես հիմա պարզ տեսնում եմ, որ դուք արժանի էք եղել այն հարուածին, և եթէ չէք ուղղւի, այն ժամանակ ես էլ մեղաւոր չեմ լինի, որ ձեզ այսուհետև աւելի վատ բաներ պատահեն։

Այս ասելով շուռ եկաւ նա ու հեռացաւ առանց անմիտ գոռոզ տղայի վրայ ուշադրութիւն դարձնելու։ Կատաղածի պէս դէս ու դէն էր վազվզում Էդուարդը և մի բան էր որոնում, որի վրայ կարողանար թափել իր բարկութիւնը։ Ծեղճ Մալին տարաբաղդաբար հենց հիմա բարձրացաւ տախտակամածի վրայ, և Էդուարդը նրան տեսաւ թէ չէ, վազեց ետևից, խփեց բռներով, վայր

ձգից գետնին, կոխոտից ոտներով և միևնոյն ժամանակ գոռում էր. Շուն, ուր ես թաք կացել, կարծում ես, թէ դու ինձ կարող ես այստեղ հակառակվել: Ես քեզ կը սովորեցնեմ նայել քո պարոնի եւակից, սև, անպիտան աւազակ:

Մալին, այն ողորմելին, տարաբաղդ տղան, յայտնի բան է, որ չէր համարձակւում ընդիմանալ իր պարոնի այս անողորմ չարչարանքներին: Բայց նաւաստիներից շատերը, որոնք այնտեղ կանգնած էին, տհաճութեամբ նայում էին այս գարշելի տեսարանին և ամենևին ցանկութիւն չունէին անգործ վկաները լինել այդ բանին: Բայց ինչ կարող էին անել նրանք: Մալին այն անգութ տղայի սեփականն էր և բացի դրանից էդւարդը նաւի տիրոջ որդին էր: Ոչ ոք իրաւունք չունէր արգելել նրան՝ ծեծել իր սեփականին, թէև սա արժանի չը լինէր ծեծի:

— Բայց այս շատ վատ բան է, ասաց վերջապէս մի գեղեցիկ երիտասարդ նաւաստի բաց ու ազնիւ դէմքով: Մենք այս չըպէտք է հանդուրժենք:

Մի ուրիշները ուսերը վերքաշեցին, կարծես ուզում էին ասել. Մենք ինչ կարող ենք անել: Հրամայելու ոչինչ չունինք, և այս սև տղան նրան է պատկանում: Այստեղ ոչինչ կարելի չէ անել:

Բայց այն երիտասարդ նաւաստին չըբաւականացաւ սրանով: Նա մօտեցաւ էդւարդին, պինդ բռնեց նրա ձեռը, որ ծեծում էր խեղճ Մալիին և ասաց խնդրելով.—Բաւական է, սիրելի պարոն: Այս խեղճ ողորմելին ոչինչ մեղք չունի:

— Դէնը գնա, կանչեց էդւարդը բարկացած և մի հարուածով խլեցաւ նրանից: Այստեղ ինձ ոչ ոք հրամայելու իրաւունք չունի: Դէնը, ասում եմ:

Յոգուց հանելով և տրտում հեռացաւ այն բարեսիրտ նաւաստին, և հէնց այն էր, որ էդւարդը ուզում էր էլի նորից ըսկսել խեղճ Մալիի ծեծը, որ յանկարծ մի նաւաստի ձայն տւեց կայմի ծայրից. Զգուշացէք, առագաստակալը վայր է ընկնում:

Կայծակի արագութեամբ շուտ մի կողմը թոռան նաւաստիները, բայց առագաստակալը վայր ընկաւ—արդեօք պատահաբար, թէ նաւաստին մի հարւած տւեց վերևը—և այնպէս սաստիկ վիրաւորեց էդւարդի գլուխը, որ նա տեղն ու տեղը վայր ընկաւ և ուշաթափւեցաւ: Մալին ընկած էր տախտակամածի յատակի վրայ և այդ պատճառով անվնաս մնաց:

— Այս ինչպէս պատահեց, հարցնում էր նաւապետը, որ վախեցած դուրս վազեց և հրամայեց վեր առնել և մօր մօտ տանել էդւարդին, որ բաւական ծանր վիրաւորւած էր: Ո՞վ գիտէ:

Կարս, 14 Փետր.

ՈՐՔԻ ԹՆԴԻՐԸ

Մանուկներիս սիրուն բիձայ,
Ադբիւրմ տուր ինձի ընծայ.
Ես աղբատ եմ որբ ողայ եմ,
Գրքի թղթի փարայ չունեմ։

Ես ծարաւ եմ չա՜տ ծարաւ եմ,
Պապակել եմ, խմել կուզեմ.
Բայց ի՞նչ խմեմ, Ադբիւր չունեմ,
Այգպէս ծարաւ ես պիտ մնունեմ։

Ընկերներս Ադբիւր կարդում
Իմ ջիգեարս է մզկտում.
Ա՜խ, ի՞նչ անեմ, փարայ չունեմ,
Հապա ո՞րդից Ադբիւր գտնեմ։

Ձեր Ադբիւրից միկաթիլ ջուր
Աղբատ որբիս ծեռքովդ տուր.
Խմեմ Ադբիւրից գովանամ
Կեանքդ օրհնեմ և գոհանամ։

Աբրահամ Մոսճեանց
Կարսի քաղաքային դպրոցի աշակերտ.

Ա. Մ.-ին. Կատարում ենք խնդիրդ և ուղարկում Աղբիւր, որ կը ստանաք ամբողջ տարին Տարագի, Առողջապահի և բոլոր յաւելուածների ու պրէմիաների հետ։ *Խմբ.*

1883 Երեսնամեակ Աղբիւրի 1912

Բացած է 1912 թ. բաժանորդագրութիւնը

XXX ՏԱՐԻ

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

XXIII ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակւում են ճոխ, բազմաբովանդակ, մանակկուսթեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների, մանկավարժների և արուեստագէտների։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ.

I. *ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» յաւելւածով։*

II. *ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» յաւելւածով։*

III. *ԱՌՈՂՋԱՊԱՀ ամսաթերթը։*

IV. *ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ V և VI պրակներ.*

V. *ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՄԱՆԱԽ 1913 թ.*

VI. *ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ։*

VII. *ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԻՒՂՈՒՄ, բազմագոյն հրաշագեղ պատկեր, պատրաստուած Եւրոպայում։*

VIII. *Հայոց ազգագոյ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ մեծադիր պատկերը։*

IX. MONA LISA (*Ջիոկոնդա*) *Լուվրի մուզէից դողացած տիեզերահռչակ հիասքանչ նկարի իսկական պատճէնը, հոյակապ գարդ ամենափարթամ դահլիճի։*

X. *Մեծն Նապոլէօն I և հայոց Լեռն վերջին թագաւորը։*

XI. *Նապոլէօն Բօնապարտի մանկութիւնը պատկերներով։*

XII. *ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ԱՂԲԻՒՐԸ,* souvenir.

Այս բոլորի տարեկան բաժանորդագինը

10 ր., արտասահմ. 18 ր. կամ 50 ֆր.

Դպրոցական աշակերտների համար

Աղբիւրը *տարեկան* 2 ր. *Առանց յաւելւածների 1 ր.*

ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ տարեկան 3 ր.

ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՏԱՐԱԶ առանց յաւելւածների, պրեմիաների և Թատրոն Երաժշտութեան՝ տարեկան 4 ր.

Աղբիւր, Առողջապահ, Տարազ, *բոլոր յաւելւածներով եւ պրեմիաներով 5 ր. (արտասահման 10 ր.)*

Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունւում։

Հասցէն՝ Тифлис, Редакція „АГБЮР“ *կամ* „ТАРАЗ“.
Tiflis, (Caucase) Direction Agbür *կամ* Taraz.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.